

ՍՈԿՐԱՏ ԽԱՆ Մ. ԳԵԼՈՑԵԱՆՑ

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ



Կ. ՊՈԼԻՍ

Ցպագր. Յ. ՀՕԼԱՍ

Գահիկ Գարա, Մեյսաննրգ Գաղազիեր Խան Թիւ 28

1911

Թիի 4

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1915 FEB 2001  
1915 JAN 2010

329.14

9-41

ՍՈՎՐԱՏ ԽԱՆ Մ. ԳԵԼՈՑԵԱՆՑ

42/7

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅԻԱՐԸ



Կ. ՊՈԼԻՒՍ

Տպագր. 6. 201.Ա.Ա

Պահիկ Գարու, Մեղյաննորդ Գաղափեր Խան Թիւ 23

1911

14 MAR 2013

19786

206

ԸՆԿԵՐ ՀՄԱՅՆԱԿ ԱՐԱՄԵԱՆՑԻՆ

Ցիօան գրչով, հսկայ մեխով Գու անհուն,  
Մտառանս միտս բանութեան դէմ աննկուն:  
Հգօր կամքի, առիւծ բազկի սէր՝ հասպե,  
Փերես խաւար եղբաներք, Գաղափարի Զօրապե:

Սը բեղմնաւոր Գու մեքերի սանարի մէջ խոնարհած,  
Շարան սարան շղթայի պէս Գաղափարի զինուորներ,  
Գու իղէպի Աստուծայ դէմ վիհ, անաասան ու խրոխտ,  
Զոհարբերեն իրենց յարգանք եւ սէր եւ կեանք անարատ:

ՍՈՒՐԱՏ Մ. ԳԵԼՈՑԵԱՆՑ

Սիրելի ընկեր,

Քեզ եմ նուիրում իմ այս գրական աշխատութիւնը:

Ս. Մ. Գ.

Ի Նիւ-Եորք 1 Ապրիլի 1911



57300-66

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ամբողջ Եւրոպայի եւ Միացեալ Նահանգների հաղափական կեանք իր զանազան, արմատական, չափաւոր, աշակողմեան, ձախակողմեան, կղերական, պահպանողական, ազատական եւ այլ բաժանմունքներով եւ նիւղաւորումներով, ընդհանուր գծերով ներկայացնում են երեք գլխաւոր հոսանքներ, զորաւոր ու պայքարող ուղղութիւններ, այն է՝ Սահմանադրական Ռամկավարական, Հանրապետական (սեպուրիի) եւ Ընկերվարական:

Վերջին դարիս հաղափական անցերը փաստեցին որ, յանուն ժողովուրդի եւ Ֆրանսական մեծ յեղափոխութեան ձեռնով հիմնուած Ս. Ռամկավարութիւն եւ հանրապետութիւնը չափի կարողանան գոհացում տալ ժողովուրդների սնեսական պահանջներին եւ դարմանել նրանց ծով ցաւերը եւ հեկց այդ պատճառով էլ երեւան եկաւ Գիտական Սոցիալիզմը, ընկերվարութիւնը, որը վերջին կես դարի ընթացում զօրանալով մտաւ աչիս վիճակի մեջ եւ հեռու չէ այն օրը ուր այդ ժողովրդական հսկայ հոսանքը, ընկերվարութիւնը տիրելով ամբողջ աշխարհի վրայ հրապարակից ֆեհ եւ հեռացնէ քե՛ հանրապետութիւն եւ քե՛ Ս. Ռամկավարութիւնը, որովհետեւ նրանցից առաջինը խոտը դրամատեերի, իսկ երկրորդը մանրերի ներկայացուցիչները լինելով ամեն հայրավոխում ոսնակոխումն աշխատող եւ արդիւնաբերող դասի գոյութեան իրաւունքները:

Այսպէս պարզ եւ հասկնալի է հաղափական կեանքը եւ-

րոպայի եւ Ամերիկայի մեջ, որովհետեւ այդ երկրների ժողովուրդները, ամեն մէկն իր տեղում միաձայն է եւ իր ներքին կեանքը գուրկ է ազգային եւ ցեղային բաժանումներից ու ստորաբաժանումներից:

Մակայն այդ հարցը արքեր կերպարանք է ստանում աշխական երկրներում, մանաւանդ Քիւրքիայի մեջ, ուր ժողովուրդը կազմած լինելով զանազան հակադիր շահերի տէր ցեղերից եւ ազգերից ստեղծում է բաղկացուցիչ ցեղերի ներքին եւ անհասական հաղափականութիւն եւ հաւաքական եւ համաձողովրդական, այսպէս ասած, պետական ընդհանուր հաղափականութիւն:

Քաղաքական այսպիսի բարդ վիճակի մեջ ենք գտնուած Հայերս այսօր Քիւրքիայի մեջ, ուր մեզ վիճակած է քե՛ ազգային ինքնութեան եւ քե՛ պետական ամբողջութեան ու առաջադիմութեան համար զատ զատ հաղափականութեամբ գործել:

Արդի սահմանադրական Քիւրքիան իր ներկայ բարդ ու խնուն վիճակովը քե՛ս դեռ չի կարողացել կազմաւորել իր հաղափական պայքարող որոհ հոսանքները, սակայն այժմուանցից իսկ կարելի է ասել որ հանրապետական ձգտումների մարմնացումը նրա մեջ գոյութիւն ունենալ չի կարող, որով ասպարեզը պիտի մնայ յետադիմական ազգայնականների, Ս. Ռամկավարների եւ գլխաւորաբար ընկերվարականների ձեռնում: Իրողութիւն է որ Քիւրք Պարլամենտի մեջ այսօր յանուն երկրի եւ ժողովուրդի խօսող երկու որոհ հոսանքներ կան, յետադիմական ազգայնականութիւնը եւ ընկերվարութիւնը: Այդ երկրի մեջ գոյութիւն ունեցող մանր բուրժուա եւ միջին կարգի դրամատեերի գոյութիւնը անխուսափելիօրէն երեւան պիտի բերէ սահմանադիր ինքնակարութիւնը, ֆեղով նրան հաղափական պայքարի ասպարեզը:

Եւ այս տեղ պայքարը կատարի կերպարանք պիտի ստանայ յիշեալ երեք հոսանքների կազմակերպած կուսակցութիւնների միջեւ, քե՛ս վերջին յարթութիւնը առանց կասկածի պիտի տան ընկերվարութիւնը, բայց մինչ այդ մեզ անհրա-

ժեզ է գիտակցութեան բերել ժողովուրդը, որովհետեւ հենց այդ գիտակցութիւնն է որ հիմքը պիտի դառնայ գիտական ընկերվարութեան յաղթութեանը :

Ահա այդ սեսակէտով եր որ հայ կեանքի մեջ նոր սաղմնաւորած հայ սահմանադրական ռամկավարութիւնը (որ իսկապէս ծրագրել է ներկայացնել ազգային ու համաժողովրդային միջին դասակարգի շահերը) ծրագիրը քննադատութեան առնելով կէս առ կէս վերլուծեցինք եւ «Ներխառնող Հայաստան»-ի խմբագրական բաժնի մեջ ցոյց տւեցինք նրանց բացասական, հակասական եւ նոյն իսկ վնասակար ու հակաժողովրդական կողմերը եւ մեր այդ արդարացի դիտողութիւնները բնաւ չհերքեցինք մեր հակառակորդների կողմից, որովհետեւ մեր բերած փաստերը անհերքելի էին եւ ջախջախիչ :

Արդ չցանկալով որ Եւրոպական եւ Ամերիկեան քաղաքական կեանքից վտարուող այդ քաղաքական հոսանքը, հինացած եւ իր այժմեութիւնը կորցրած սահմանադրական ռամկավարութիւնը թիւրքիայի վիճակի մեջ երեւալով արգել դառնայ նրա առաջխաղացումին, մենք յարմար եւ անհրաժեշտ սեսանք «Ներխառնող Հայաստան»-ի մեջ պարբերաբար լոյս բնծայած մեր «Ազնիւ Պայքար» յօդածաւարքը, նրան կցելով «Քննելիարութիւն եւ Հողային խարցը» գրամբները բրոշուրի ձեւով հրատարակ հանել, որպէս զի ժողովուրդը առիթ ունենայ շատ մօտից ուսումնասիրելու իր կեանքի պրոբլեմներից կարեւորագոյնը :

«Հողային խարցը» եւս կցելով մեր այս բրոշուրին, մենք ցանկացանք վերջ տալ այն քիւրխմացութիւններին, որոնք շնորհիւ մեր հակառակորդների սւած սխալ մեկնաբանութիւններին, որոնք տեսնել են բռնուժ հասարակութեան անձեռնմաս մասի վրէժների մեջ :

ՍՈՒՐԵՍ Մ . ԳԷԼՕՅԵԱՆՅ

# ԱԶՆԻՒ ՊԱՅՔԱՐԸ

Ա .

*Մտաւոր, բարոյական, ֆիզիքական, քաղաքական եւ տնտեսական դարաւոր, աննախնթաց եւ ծայրայեղ ճնշումներից, հալածանքից եւ մահացնող հետապնդումներից յետոյ, շատ բնական էր, որ հայութիւնը արդի համեմատաբար աւելի ազատ շունչ առնելու միջոցներ ընձեռնող Սահմանադրութեան շրջանի մէջ մտքի եւ հասկացողութեան շփոթութեան մատնւելով՝ դժւարանար իր գոյութեան եւ ապագայ աճումին ու զարգացման պահանջներին համապատասխանող շաւղի մէջ մտնել եւ գծել իր նորմալ ընթացքը, ըստ որում, այսօր հայ գանգուածը գտնուում է մտաւոր ու գիտակցական տարօրինակ քաօսաշին վիճակի մէջ, ուր հանրանէր մտքերի եւ ըմբռնումների անհամար հոսանքները տարբեր կէտերից ծնունդ առած, միմեանց խաչաձեւող ուղղութեամբ սկսել են ընթանալ, իրենց շուրջն առնելով պայքարող ուժերի հակամարտ որոշ հոսանքներ, որոնց ամէն մէկն իր դիրքը հանրային կեանքի մէջ որոշելու համար արտակարգ ճիգեր է թափում, ցուցադրելով միեւնոյն ժամանակ իր ամբողջ ներքինը :*

*Եւ այս վիճակը, ինչպէս վերն ասեցինք, շատ բնական է*

և մեզ բնաւ չի զարմացնում, որովհետեւ բռնութեան դարաւոր խաւարից յանկարծ ազատութեան լոյսի դէմ կանգնելն նրանց գլխի պտոյտի, ուղեղի շիտթութեան և մտքի ցնցման ֆախտի անցնէր:

Հակամարտ մտքերի զանազան հոսանքների մէջ կան այնպիսիք, որոնք խմորւած լինելով հայութեան տառապանքով, ծնւել և մնւել են նրա դարաւոր ցաւերի ու թշուառութեան թեւերի մէջ և այդպիսով կարողացել են երկարատեւ փորձառութեամբ թափանցել ժողովուրդի իսկական ցաւերի մէջ, շօշափել նրա վէրքերը և գտնել նրանց բուժումի պահանջւած վերջնական դարմանը:

Մտքի, գիտակցութեան և ֆիզիքական այսպիսի հոսանքներ սուրբի և հուրի շրջանից անխաթար անցնելով արդէն զբրաւել են իրենց տեղերը, որոչէլ են իրենց գիրքը հանրային կեանքի մէջ և գծել են իրենց ընթանալիք ուղին, որոնց և ոչ մի գիմադիր ուժ կանք առնել տալ չի կարող:

Այդ անողք պահանջն է ընկերային կեանքին:

Կան նաև հոսանքներ, որոնք բռնութեան կամ ազատութեան օրով գոյութիւն ստանալով, կամ իրենց անհարազատութեամբը և կամ ժողովրդեան ներքին ցաւերի արմատական չարժաոթիթներին անձանթութեան հանգամանքներովը գալիս են բարդելու մեր հանրային կեանքի մտաւոր, բարոյական և կուլտուրական արդի չիտթ և քասասային վիճակը: Մի վիճակ, որ իր բոլոր պարագաներով և հանգամանքներովը կարելի է ասել թէ պատճառ է դառնում ազգային աշաւոր մի տազնապի, որին եթէ չդիմադրէ նոյն այդ ազգի և համայնական առողջ գիտակցութիւնը, շուտով ակամատես պիտի լինինք ահուկի քայքայումների:

Այդպիսի մի քայքայման վտանգի սպառնալիքը երեւան չէր կարող դալ՝ եթէ ինչպէս բոլոր ազգերի և համայնքների նոյնպէս և հայութեան մէջ ծայր տւած հակամարտ հոսանքների ժողովուրդի մէջ մղած պայքարը բոլորն էլ լինէր ո՛չ

թէ իրենց գոյութեան պահպանումին ի նպաստ, այլ ժողովուրդի վերածնութեան, իսկ միմեանց հանդէպ՝ լինէր գաղափարական և սկզբունքային և ոչ թէ անազնիւ հակառակորդի կրքոս ու նախանձոտ և վատ ինստինկներով շարախւած մի պայքար:

Հակամարտ հոսանքների գոյութիւնն այսօր հայ կեանքի մէջ, լինի այդ արագաւ կամ անհարագաւ, գիտակց կամ անգիտակցից, ժողովրդանպաստ կամ ինքնանուէր՝ ամէն մէկն իր կեանքի ու գոյութեան որոշ շրջանը և ընթացքը պիտի ունենայ հանրային կեանքի մէջ, ուր նրանք իրենց որոշ նըպատակների իրագործման համար ամենայն իրաւամբ պիտի պայքարին: Միմեանց դէմ, իրենց սկզբունքի յաղթանակը տօնելու նպատակով: Սակայն այդ բանը ո՛չ մէկին իրաւունք պիտի տայ իր կեանքն ապահովելու և գոյութիւնը յաւերժացնելու համար կոպիս ուժով, տեւորի եւ սարսափի միջոցով վտանգել հակառակ հոսանքի գոյութիւնը և կասեցնել նրա ընթացքը, որովհետեւ այդ ձեւը անգառնալիօրէն դատապարտւած է և այդպէս էլ պիտի մնայ մինչև վերջ:

Այսպէս, ընդունելով վերածնութեան շաւիղի մէջ մտած ամէն մի ազգի, ինչպէս նաև հայութեան իրաւունքը քաղաքական և անտեսական հասկացողութեամբ պայքարելու ու զարգանալու զանազան հոսանքներին սաղմնաւորելու, ծընելու և հակամարտ պայքարի մէջ դնելու համար, պիտի ընդունենք նոյնպէս, որ այդ պայքարը հիմնւած պիտի լինի միայն և միայն գաղափարի և սկզբունքի ազնիւ ու ասպետական հողի վրայ, և որպէսզի այս ձեւի պայքարը հայերիս մէջ եւս — ինչպէս այդ լինում է այսօր, քաղաքակիրթ ազգերի մէջ — իրականանայ, արգասաւորի և համաշխարհային ծախահարութեան արժանանայ՝ պայքարող կողմերից ամէն մէկը պէտք է խուսափէ իր սկզբունքային պայքարի ընթացքում, լինի այդ գրաւոր կամ բերանացի, հրապարակաւն կամ մտերմական շրջանների մէջ, արտաբերելու այն-

պիտի սխալ բացատրութիւններ, որոնց նպատակը կը լինի անխղճօրէն խեղաթիւրելու և ազաւազելու հակառակորդի ամբողջ դաւանանքի և սկզբունքի հիմնակէտերը, մի բան, որ պիտի ասել թէ աւելի վտանգաւոր և դատապարտելի է քան ինքնապաշտներին յատուկ բռնի ուժի, սուիայի և տէնօրի հրէշային պայքարը :

Եւ ակնարկուած մաքուր ու ազնիւ պայքարը, բնականաբար, կարելի է սպասել այնպիսիներից, որոնք ծնւած՝ ազնիւ զգացումներով, օփուած ժողովրդանպաստ գաղափարներով, առաջնորդելով անձնաւորութեան վսեմ որոշումով և մոռանալով իրենց «ԵՍ»ն ու «ՆԱ.Հ»ը կը նւիրւին ազգի և հանրութեան վերաշինումի և բիւրեղացման նւիրական գործին :

Հայութիւնն առաջնորդելու յաւակնտութեամբ երեւան եկած հայ կուսակցութիւնները, այսօր իրենց պայքարի ամենաբարձր աստիճանի վրայ են կանգնած, ուր ցաւ է ասել որ յաճախ ցուցադրուած պայքարի սխալ ու հակաբնական երեւոյթը մեզ ա՛յն համոզմանն է բերում, որ նրանք զեռ շատ հեռու են կանգնած կուսակցական գիտակցութիւնից և թէ այդ ձեւի պայքարը մղուած է չէ թէ լոկ սխալ ու վնասակար ուղղութեամբ այլ միայն իրենց անհասական գոյութեան համար :

Գաղափարի և սկզբունքի յաղթութեան յաջողութիւնը պայմանաւորուած է պայքարողի անաչառ, անկողմնակալ և ազնիւ վերաբերմունքից զէպ հակառակորդի դաւանած վարդապետութիւնը և այդ ադնիւ անաչառութիւնը ա՛յն ժամանակ երեւան կգայ, երբ պայքարի և քննադատութեան ժամանակ չեն արտայայտուիր դիտաւորեալ շփոթումներ և մտքերի ազաւազումներ, և երբ հակառակորդի դաւանած վարդապետութիւնը վերլուծման և քննադատութեան կ'ենթարկւի իբրև վարդապետութիւն, դաւանանք և սկզբունք, իսկ այդ դաւանանքի շուրջը հաւաքածներին՝ որպէս կուսակցականներ և

այդ վարդապետութիւնը գործադրութեան մէջ բերողներ, որոնց սկզբունք և վարդապետութիւնը թերեւս լաւ, իսկ իրենք ու իրենց գործելակերպը վտանգաւոր են և կամ թէ հակառակը, հետեւաբար պայքարի և քննադատութեան ընթացքում աչքաթող անել այս գլխաւոր կէտը, նշանակում է հանրային միտքը դժբախտաբար շեղել ճշմարտութիւնից :

Օրինակ, մենք գիտենք որ՝ հայութեան մէջ գոյութիւն ունին Բնկերվարական, Ռամկավարական և ազգայնական հոսանքներ, որոնք միմեանց դէմ ետանդուն կերպով պայքար են մղում, սակայն այդ պայքարի ընթացքում ներկի չէ որ և է կողմին, որ՝ որևէ ընկերվարական հատուածի կուսակցական սխալ քայլի պատճառով դատապարտել ընկերվարութիւնը, այդ հիմնական ու գլխաւոր վարդապետութիւնը, և կամ հակառակը, այլ ժողովուրդի միտքը պարզելու և նրան իր քաղաքական ու տնտեսական պայքարի ու վերածնութեան գործին մտից ծանօթացնելու համար պայքարող կողմերից ամէն մէկը քննութեան պիտի առնէ հակառակորդի դաւանած վարդապետութիւնը արմատապէս և համեմատութեան դնելով իրենի հետ, հանրութեան ներկայացնէ իր եզրակացութիւնը նոյն ճանապարհով : Իսկ թէ այդ վարդապետութեան հետևող որևէ համայնքում իր գործելակերպի մէջ ժողովրդավնաս սրխալներ կը ցուցադրէ, այն ժամանակ սխալները պիտի դատապարտել որպէս «կուսակցականներ» ի սխալ և ոչ թէ հետեւանք իրենց դաւանանքին և վարդապետութեան : Ահա այս մտքով և հասկացողութեամբ է, որ մենք պիտի քննադատութեան առնենք Հ. Ս. Ռ. կուսակցութեան ընդգրկած սկզբունքը և ցոյց տանք թէ ի՞նչ տարբերութիւն կայ այդ Ռամկավար և Սօցիալ-Դեմօկրատ (Ռամկավար) երկու կուսակցութիւնների սկզբունքների մէջ :

Բ .

Հայ կեանքի մէջ երեւան եկած քաղաքական կուսակցութիւնների գոյութեան իրաւունքների սահմանները որոշելու և նրանց գոյութեան բուն շարժառիթներն ու ձգտումներն ու նպատակներն իրենց իսկական գոյներովը հրապարակ հանելու համար մենք պարտաւոր ենք նախ այդ կուսակցութիւնների ծնունդը և նրանց զարգացման ընթացքը քննութեան առնելով տեսնել թէ՛ նրանք ի՞նչ պայմանների տակ էր , որ ծնունդ առան , յանուն և ինպատ ինչի՞ է որ ապրելու կ'աշխատին , և ապա ցոյց կ'տանք թէ ի՞նչ ասարեւորութիւն կայ նրանց բուն նպատակների և ձգտումների մէջ , թէ՛ ո՞րն է որ կոչւած է՝ ազգի և ազգերի , ժողովուրդների և մէկ խօսքով՝ համամարդկային զանգաճի վերջնական փրկութեան իսկական առաջնորդը հանդիսանալու :

Նախ քան մեր բուն ասելիքին անցնելը պիտի պարզենք այն կէտը , որ մեր քննադատութեան ընթացքում ընկերվարութիւն ասելով մենք միշտ աչքի առաջ պիտի ունենանք ռամկավար ընկերվարութիւնը , որի հաւատարիմ ներկայացուցիչն է հայ կեանքի մէջ՝ Ա . Դ . Հնչակեան կուսակցութիւնը , դորանից դուրս թէև մենք ունենք յեղափոխական ընկերվարականներ , բայց նրանց հետ ունեցած վիճաբանութիւնը և նրանց գործելակերպի և գոյութեան իրաւանց դէմ ունեցած մեր առարկութիւնները նկատելով որպէս ընկերվարութեան ներքին մի հարց , հեռաւարտ մենք այս տեղ պիտի խուսափենք այդ ճիւղաւորումի , ասենք Յեղափոխական Ընկերվարութեան դէմ խօսել , որի արտայայտիչն է հայ կեանքի մէջ Հ . Յ . Դաշնակցութիւնը . ո՛չ թէ որովհետև նրա դէմ ասելիք չունենք և կամ նրա գոյութիւնն ընդունում ենք որպէս անհրաժեշտութիւն , ո՛չ , այլ այն պարզ պատճառով՝ որ քննա , դատութեան բազմակողմանիութիւնով և բարդ ճիւղաւորում

ներովը մենք շիտթած կը լինենք հասարակութեան միտքն ու աչքպիսով ամբութեան դատապարտած՝ մեր այս ուղղութեամբ կատարած քննադատական բոլոր ճիւղերը :

Յեղափոխական ընկերվարութեան , նրա բանի ուժով դործելու եղանակի և ընդգրկած հակաբնաշքչական արիւնտ , արի յեղափոխութեան դէմ մեր առարկութիւնները պահելով միշտ իրենց դիմագրական հողի վրայ առ այժմ աչքաթող պիտի անենք Սօցիալ Ռէվօլյուցիօնէրութեան և նրա հայութեան մէջ երեւան բերած ներկայացուցիչ Հ . Յ . Դ . և ռամկավար ընկերվարութեան որպէս հակադիր գլխաւոր հոսանք ընդունելով Սահմանադիր Ռամկավարութիւնը մեր ուշտորութեանը պիտի առնենք միայն այս վերջինին :

Ասացինք նաև , որ հայ կեանքի մէջ թէև կայ ազգային մի հոսանք ևս , սակայն այդ էլ էապէս ժանկով Սահմանադիր Ռամկավարութեան մէջ , մենք մեր այսօրուան պայքարը սահմանւած ենք տեսնում Ռամկավար Ընկերվարութեան (Ա . Դ . Ե . Ժ . Երկրաբան) և Սահմանադիր Ռամկավարութեան մէջ միայն : Այդ երկու գլխաւոր հոսանքներից դուրս որևէ կուսակցական , խմբակցական ևայլն շարժումները պարզ չեղումներ են և միւսէն վերջն ալ պիտի նկատուին որպէս անհարազատութիւններ , որոնք վաղ կամ անաղան էվօլյուցիայի (բնաշքչման օրէնք) աւտորք ձևւորովը պիտի ջնջւին և անյայտանան մեր կեանքի շրջանից :

Որպէս ընդօրինակումս Արեւմտեան ազգերի քաղաքական կեանքին , հայ կեանքի մէջ ևս քաղաքական ու տնտեսական պայքարը այսուհետև պիտի մղուի երկու գլխաւոր հոսանքների , այն է զրկւած և զրկող դասակարգերի միջև , որոնցից առաջինի ախոյեանն է հանդիսանում Ռամկավար ընկերվարութիւնը , իսկ երկրորդին՝ Սահմանադրական Ռամկավարութիւնը : Արդ այս երկու հոսանքներին ժողովուրդի առաջ մեր կացնելու համար՝ պիտի դառնանք մեր բուն ասելիքներին : Նախ պիտի ցոյց տանք թէ ո՞ր տեղից ծնունդ առան այդ եր

կու հոսանքները և ապա կասենք թէ ի՞նչ է նրանց ամէն մէկի պաշտպանած թէզը, և թէ այդ թէզերի պաշտպանութիւնն ի նպաստ ո՞րին է :

Ահա թէ ի՛նչպէս :

Մարդկային գոյութեան պայքարի ամբողջ պատմութիւնը մեզ ցոյց է տալիս թէ՛ այդ պայքարը մղուել է և մղուում է պարզապէս անտեսական առանցքի շուրջը, որի ընթացքն ու թաւալումը կանոնաւորելու համար նոյն մարդկութիւնը ժամանակի ընթացքում և ըստ պահանջման հարկին սահմանել է մասնաւոր օրէնքներ ու իրաւանց յարաբերական սահմաններ, որոնք լծորդած անտեսական վիճակին, ներկայացնում են մեր քաղաքական հոսանքների քաղաքաստեսական պայքարի կեդրոնը, հոգին և էութիւնը :

Բայց թէ ինչպէս երեւան եկաւ այդ անտեսական հարցը, և ինչպէս նա հասաւ այսօրւան վիճակին, այդ է մեր բացատրութիւնների գլխաւոր յենարանը :

Մենք գիտենք, որ պատմութեան ծանօթացրած մարդկութիւնը իր ստեղծագործութեան նախնական օրերում ապրում էր՝ համայնական (կոմունիզմ) ամենապարզ վիճակում, ուր բնութեան ծոցում ծնւած այդ մի ափ մարդիկ հաւասար իրաւունքներով և առանց «իմ» ու «քոյի», օգտուելով նոյն բնութեան անսահման բարիքներից, նրանք ապրում էին կատարեալ հաւասարութեան մէջ առանց տրտունջի և առանց բռնութեան որեւէ խայթի, Բայց երբ նոյն համայնականութեան սրտի մէջ մէկ կամ միւս պատճառներով և կամ ազահների ու ընչաքաղցների բնազդման մարմնացումովը սողոսկաց ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐ ՈՒԹԵԱՆ իժը, այն ժամանակ մարդկութիւնը կորցնելով իր բնատուր ազատութիւնը, գերի դարձաւ սեփականացնելու, խլելու և յախճատակելոո կործանարար պայքարին, պարզապէս իր կեանսական պէտքերը, ապրելու անսխիջական կարիքները լեցնելու համար : Եւ հէնց այս տեղից ծնունդ առաւ այդ նախնական համայնականու-

թեան յաջորդող հալածւած մարդկութեան հարիւրաւոր դարերի ա՛յնպիսի դառն ու արիւնոտ շրջաններ, որոնք ընդհանուր գծերով ու կուռ սեղմումով հազիւ թէ կարելի լինի բաժանել նախնական գերութեան և Աւատական շրջանների, որոնց ծալքերի մէջ պահւած են մլայն գոյութեան պայքարի, ստամոքսի, կենսական կարիքների, մէկ խօսքով կեանքի զանազան պահանջները լեցնելու տխուր, սեւ ու արիւնոտ պատմւածքները :

Դարեր ու դարեր մարդկութիւնն իր այդ արիւնոտ պայքարի մէջ թաւալելով առաջանում էր առանց հասկանալու այդ բոլորի շարժառիթը, առանց վերլուծել կարողանալու այդ առթիւ մարդկութեան մէջ տիրող հնուկի ա՛յն անհաւասարութիւնը, որով մարդկային ընկերութեան փոքրամասնութիւնը տէր բոլոր վայելքների ու փարթամ կեանքի ակնատես էր լինում զրկւած մեծամասնութեան սովմահ մաշուելուն ու աւնէանալուն . . :

Մինչեւ որ դառնութեան բաժակը յորդելով, 18 րդ դարու վերջերը մարդկութիւնն սկսեց ըմբոստանալ տիրող ընկերային կարգերի դէմ և աշխատեց գտնել այդ բոլոր դառնութիւնների ծնունդ տւող անհաւասարութեան գրգռպատճառները և նրանց աղբիւրը :

Այդ բանի կենդանի օրինակը ցուցադրեց առաջին անգամ Ֆրանսան, իր գործով, սուրով, մտաւոր և ֆիզիքական յեղափոխութիւնովը :

Այդ միջոցին գտնւեցին խելացի գլուխներ, որոնք կարողացան մինչեւ մի աստիճան ըմբռնել այդ յեղափոխութեան բուն շարժառիթը և յայտարարել թէ՛ ընկերային այդ վատթարագոյն վիճակը հետեանք է անտեսական անհաւասարութեան : Բայց այդ յայտարարութիւնը լինում էր ընդհանուր գծերով, վերացական ձևով և առանց գիտական վերլուծման ու փաստի, մասնաւոր որ այդ առթիւ նրանց առաջադրած դարմանումներն իրենց անկարելիութեամբը խրաչեցնում էին

գրկւած մեծամասնութեան և սարսափեցնում՝ գրկող փոքրամասնութեան :

Ի այց երբ 19 ըզ դարու առաջին կէսի վերջերում սկսեց արեւմտեան երկիրների յեղափոխութիւնը և ազգերի վերածնութեան շարժումը, այն ժամանակ Կարլ Մարքսի բազմակողմանի ուսումնասիրութիւնով և գիտական վերլուծումներով վերջնականապէս ապացուցուց թէ՛ հարիւրաւոր դարերից ի վեր մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող աստիճանաբար ուժեղացող դժգոհութեան այժմեան պայթումի յեղափոխութեան գլխաւոր պատճառն է սոստեսական անհաւասարութիւնը . որը պատճառ է դարձել այսքան արիւննեղութիւնների և դժբախտութիւնների, և թէ հէնց այդ սոստեսական անհաւասարութեան պատճառով է, որ այսօր մարդկութեան 95 առ հարիւր տեղում կանգնած լինելով գրկումի և անօթութեան հողի վրայ կազմում է այն դասակարգը, որի իսկական յեղափոխութիւնով է որ մարդկութիւնը պիտի կարողանայ ներկայ թշուառութեան եզրից վերադառնալ իր նախկին համայնական հաւասար կեանքին, տախան աւելի քաղաքակիրթ, աւելի մշակւած և վայելուչ ձեւերին : Եւ այդ գերագոյն նպատակին հասնելու և ընդհանուր մարդկութիւնը սոստեսական սեփական անսցումի արհաւիրքից և նրա բռնապետական ճիրաններից ազատելու համար, Կարլ Մարքսը իր ընկերվարական գրքակի տակ հրաւիրեց միայն ընչազուրկ և շահագործող դասակարգը, նրան յանձնելով իր գիտական ընկերվարութեան կտակարանը՝ «Կապիտալը»՝ որ մանրամասն վերլուծումն է մարդկային կեանքին, սոստեսական (մատերիալիստական) տեսակէտով և հրահանգ՝ աշխարհիս ընական հարաբերութիւնները և նրանց շահագործելու միջոցները ընկերականացնելու և համայնականացնելու, որոնց արդիւնքը նրանց պատուր վայելելու իրաւունք պիտի ունենայ ամէն մի ԱՇՆԱՏՈՂ առանց խարութեան և զրկումի :

Այսպէսով, ընկերվարական գիտական վարդապետու-

57300-66

թիւնը ժամանակաշից ինդուստրիական ( ճարտարարեւստ ) և արդիւնաբերական նշանակելի յեղաշրջումի, և մեքենաների և զանազան գիւտերի երեւան գալու հետ միաժամանակ եկաւ շեշտելու թէ՛ մարդկային զանգւածը սոստեսական հողի վրայ երեւան բերել և դէմ յանդիման է կանգնեցրել . երկու անհաւասար դասակարգեր (մէկ կողմ թողած այդ երկուսի մէջտեղ կանգնած մանրաբուրժուա կլասակարգը, որը ժամանակի ընթացքում կապիտալի կեդրոնացման ճնշման տակ պիտի շարի և միանայ ընչազուրկ դասակարգին, կազմելու համար ընտհանուր բանակը բռնապետութեան դէմ կուելու համար) , մէկը՝ փոքրամասնութիւնը, որ զինւած ընկերային կազմից յախըտակած և անարդարութեամբ սեփականացրած սոստեսական անաւոր ուժով իր իրաւունքն է համարում շահագործելու և կեղեքելու ընդհանուր մարդկութիւնը . իսկ միւսը՝ սուսար մեծամասնութիւնը որ սոստեսական դարաւոր պայքարի ընթացքում գրկւած և անիրաւււած, այսօր իսկ իր միակ հարստութիւնով, այն է իր աշխատութեան ընդունակութիւնով ու ֆիզիքական ոյժովն ընկած հակառակ դասակարգի շահագործումի մեքանիզմի անուղի անիւների մէջտեղ փչրւում, ջաւում և կեփսքսնում է գերեզման իջնելու աստիճանին :

Եւ իրերի այս դառն վիճակը կերպարանափոխելու և սոստեսական այս անհաւասարութիւնը պահպանելու և յաւերժացնելու համար շահագործող փոքրամասնութեան կողմից դրւած վարչական ու քաղաքական կարգ ու սարքերը յեղաշրջելու համար, նոյն այդ բռնութեան և անիրաւութեան ըստեղծած թշուառութեան ծոցից ծնւած ընկերվարութիւնը Մարքսի Գիտական Սօցիալիզմը վճռապէս ընդունեց ԳՍՍՀԱՍՐԳՍԻՆ ԿՌԻԻԻԸ, կռիւ՝ որ օր օրի վրայ աւելի շեշտում է և որի մէջ բանւոր, շահագործող, ընչազուրկ մեծամասնութիւնը խուժելով սկսել է կազմել միջազգային այն անաւոր բանակը, որի ջանքերով ու զոհողութիւններով մարդկութիւնը պիտի ազատուի անարդարութեան անագործումի կաշկանգում-



ներից, և մի անգամ այս վիճակի մէջ, մարդկային զանգւածը պիտի ազրի ընդհանուր և համայնական աշխատանքի փառաւոր մի շրջանի մէջ, ուր ընկերային կարգ ու սարքը երևան պիտի բերէ իսկական և երկնային «Ազատութիւն, Հաւասարութիւն և Եղբայրութիւն», ցարդ նահատակւած, չարչրկւած և կեղծաւոր շահագործողների ձեռքով բզբւած խորհրդանշանները, և ուր ժողովուրդը պիտի լինի իր միահեծան տէրն ու տնօրէնը և ոչ թէ իրենցից փրցւած և խորթացած մի լնչ որ այլտեսուած փշրանք:

Այսպէս ուրեմն, Ռամկավար ընկերվարութիւնը ապագայ յաղթութեան և գերազոյն նպատակի իրագործման որպէսհիմնաքար, պատուանդան և յենարան է ընդունել ԴԱՍԱԿԱՐԳՅՅԻՆ, ԿԹԻԻԸ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՁՆՁՈՒՄԸ, որից յետոյ միայն արգարութիւնը իրականացած պիտի տեսնէ մարդկային ընկերութիւնն իր նկատմամբ:

Եւ իրերի այս վիճակը, այս մեծ որոշումը ո՛չ արեւստական է և ո՛չ ներշնչմամբ և ո՛չ էլ դաւադրութիւն՝ անհատի կամ համախմբումների կողմից, այլ մարդկային կեանքի տնքնական ընթացքի հետեանք, որին սողմնաւորեց բռնութեան յափշտակումի և շահագործելու միառումով առաջնորդող տարրը և ծնաւ գրկւած ու թշուառացած մարդկութեան գրեթէ ամբողջութիւնը, մի բան որ անխուսափելի է և հրամայական:

Անա՛ այս սեղից և այս պայմաններից ծնունդ առաւ ընկերվարութիւնը, իսկական Ռամկավարութիւնը, որի արտայայտիչն է Հայ կեանքի մէջ Ս. Դ. ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ:

Գ .

Նախորդ գլխում մենք պարզեցինք թէ ինչպէս, ինչ ժամանակները տակ և ինչու ծնունդ առաւ Ռամկավար Ընկերվարութիւն, կամ ասենք Սօսիալ Դէմոկրատ Նոսանքը: Իսկ այժմ համառօտ կերպով պիտի պարզենք հակառակ նոսանքի, Սահմանադրական Ռամկավարութեան դոյութեան պայմանները և նրա ձգտումը:

Անուրանալի է, որ նախ քան Ռամկավար Ընկերվարութեան կազմաւորւելն, արդէն կազմաւորւած և հրապարակի վրայ իր որոշ տեղն էր գրաւել Սահմանադրական Ռամկավարութիւնը և թէ ճէնց այս վերջինը եղաւ նարազատ ծնողը Ռամկավար Ընկերվարութեան, բայց և այնպէս ուշադրութեան աննելու գլխաւոր նարցը նրանց ժամանակակից հանգամանքները և սողմնաւորութեան պայմաններն են՝ որ մենք աչ ամուժ ենք երեւան բերել:

Կար մի ժամանակ, երբ կղերականութիւն, աւստականութիւն և արքայականութիւն, երեք բռնապետ և կեղեքիչ տարրերը մրացած, յանուն իրենց ժողովուրդի նօգու և արտաքին ու ներքին յարաբերութիւնների պաշտպանութեան քամում և շահագործում էին ժողովուրդը և սղբակի նման ծծում էին նրա, կամ ասենք բնականաւոր մարդկութեան արիւնը:

Եւ այս տարրերը, իրենց դոյութիւնն ապահովելու, իրաւունքները յաւերժացնելու և իրենց կատարած անբեւեակայելի անիրաւութիւններն արդարաչեւելու համար շահագործող ժողովուրդին գրել էին իրենց ձեռքով իսկ գժւած բռնապետական երկաթեայ օրէնքները՝ օղակ մէջ, սղմում և քամում էին նրան իրենց թեւ ու թիկունք եղող զլնուորականութեան բիրտ ձեռքով... Իրերի այս դառն վիճակը ցայտուն կերպով մեզ ներխայտում է նրանտական պատ-

մութիւն : իր 18րդ դարու վերջերում սկսած արնոտ ու մութ շրջանովը , ուր երբեմն երեւան են գալիս Ռիչէլիօներ , Մագարիներ , Լուիներ , որոնք որդէս հարազատ ներկայաւ ցուցիչներ կղերական և Աստածանոց արքայական դասերի երկրի հողերը բաժանել ու նւիրել էին աւատականներին և ազնւականներին , նրանց սուրբ և զինւորական պաշտպանութիւնը վայելելու նպատակով միայն , մէջս կողմում թողնելով հողազուրկ , անօթ , մերկ և թշուառ բաղմամիլիոն մի ժողովուրդ , որը թշուառութեան ովկիանոտի փոթորկից բռնւած՝ հսկայական ալիքների նման փողոյէ փողոց և քաղաքէ քաղաք տարուբերում էր սոսկ մի կտոր չոր հաց գանելու . . . Եւ քանի՛ քանի անգամներ այդ անաւոր ալիքներից փշրանքներ միայն չը բաշխեցին արքայական պալատների երկաթեայ պատերին հայ . . . հաց աղաղակելով և սակայն հացի փոխարէն չիկացած կապարների տարափի տակ աշնան տերեւի պէս գետին փուռեցին նօթ , մերկ ու թշուառ ժողովուրդի անզէն ու անպաշտպան դաւակները . . . ,

Եւ ժողովուրդի պահանջածը լով հայ էր , հայ , և ո՛չ թէ օրէնք և իրաւունք , որովհետեւ նա այդ բաները առանձնաշնորհում էր համարում վերոյիշեալ երեք՝ կղերական , արքայական և ազնւական դասակարգերն , իսկ ինքը , ժողովուրդը , ստեղծւած էր պարզապէս այդ իշխող դասակարգերի գոյութիւնը պահպանելու համար զօնաբերել իր կեանքը և ինչքը , փոխարէնը մուրալու մը պատառ չոր հաց :

Բայց այս համատարած թշուառութեան մէջ գանձեցին մտածողներ , որոնք սկսեցին անաւոր չարիքի արմատը փրկատուի երկու գլխաւոր բաները մէջ , նախ՝ ժողովուրդը դասակարգային բաժանման անսօրմալ վիճակը , երկրորդ՝ նրա իրաւազրկութիւնը օրէնսդրութեան մէջ , մէկ խօսքով այն որ՝ ժողովուրդը թոյլ էր աւել մինչ այդ , մի որոշ իշխող դասակարգ (ազնւականութիւն , արքայականութիւն և կղերականութիւն , իր անպէտք , անաշխատ և ծոյլ գոյութիւն

նով ծանրանալ իր ուսերին , որպէս իշխող և երկրի ուժազդի պաշտպան տարր , և ապա թոյլ տալ հէնց այդ իշխող տարրին իր քէյֆի և շահերի համաձայն հաստատել այնպիսի օրէնքներ , որոնցից ոչինչ սպասելիք կարող էր ունենալ ժողովուրդը , եթէ ոչ չարիք : հալածանք ու թշուառութիւն :

Եւ շատ էլ իրաւացի էր այդ :

Ուրեմն վերացնել դասակարգային խտրութիւնը քաղաքական տեսակէտով և վարչական ղեկը սալ ժողովուրդի ձեռքը , այս եղաւ ժամանակակից մտածողների , գրողների և ընկերային առաջնորդների նշանաբանը և մտահոգութեան առարկան :

Եւ իսկապէս դասակարգային այդ անուշի անհաւասարութիւնը , շահագործումի և կեղեքումի այդ արշւնոտ և անարգ ձեւեր իր սահմանին հասած , էլ առաջ գնալու ո՛չ տեղն ունէր և ո՛չ էլ կարողութիւնը , այժմ հերթը շահագործող , հալածող ժողովուրդինն էր , որը և շարժւեց , ալիքիծւեց ու ցլեց բռնապետութեան առաջ և սկսեց դասակարգային գոյութեան արիւնալի անկ կտուր :

Մա՛ն բռնապետութեան , կեցցե՛ ժողովրդապետութիւնը , աղաղակում էր անօթի և մերկ բաղմամիլիոն ժողովուրդը : Անկցի՛ լմչոտացայ՝ ժողովուրդը , կեցցէ՛ և յաւերժաւ նայ արքայական տիրապետութիւնը , որտու՛մ էին բռնապետութեան թնդանօթներ և հարիւր հազարաւոր հրազէնները . . . :

Եւ երեք յաջորդական ու երկարատեւ յեղափոխութեան ընթացքում երեւան եկաւ « Ազատութեան , Հաւասարութեան և Եղբայրութեան » արիւնոտ նեցուկ՝ գիլիօթիւնը և միլիոնաւոր մարդկային կառափներ ըտրգերի վրայ ցցեց ժողովուրդի յաղթութեան դրօշակը : Զինաթափելով ազնւականութիւնը , չափաւորեց կղերը և օրէնքի սահմանների մէջ տեղաւորեց արքայականութիւնը , որոնք առաջին անգամ պարասուորակցին իրենց սարուկ ժողովուրդի հետ կողքի դա-

քի նստել և հաւասար իրաւունքներով օրէնքներ հաստատել երկրի և ազգի համար :

Եւ հէնց այստեղ կանգ առաւ ի նպաստ ժողովուրդի մշտածողների գործունէութիւնը , որովհետեւ դասակարգերը մօտեցել էին միմեանց և սահմանել էին այնպիսի փոխադարձ օրէնքներ , որոնցմով դասակարգերից ամէն մէկն իր տեղը գրաւած՝ պիտի պաշտպանէր իր իրաւունքը և այդպիսով , անբռնելով միասին առած պիտի ներկայացնէին ընդհանուր ազգը , ժողովուրդի զանգածը , հետեւաբար և իրականացած կը լինէր Ռամկավար ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ :

Այս ձեւով հիմնուած ժողովրդապետութիւնը իր ժամանակի ոգուն և նրա քաղաքական ու անտեսական պահանջներին համապատասխանող ձեւերից ամենայրմարը և նպաստաւորը կարող էր համարուել , որովհետեւ ինչպէս չէտեցինք , դասակարգերը սահմանադրուած օրէնքների օղակով շաղկապուելով և օրինական յարաբերութիւններով ներկայացնուած էին ամբողջ ժողովուրդը : Եւ ոչ թէ նրա մէկ տարրը կամ առանձնաչնորհւած մէկ դասակարգը , ըստ որում դասակարգերի գոյութեան պահպանումը պահպանուած զաւսեց ժողովուրդի ամբողջութեան սեւակէսով : Եւ այդ հարկաւոր էր ու շատ բնական , որովհետեւ դասակարգային արեւնտտ բըւնապետութիւնից նոր ազատուած մի ժողովուրդը չպիտի կարողանար արտակարգ ուսումներով դարերի փորձառութիւնն ու հմտութիւնը ձեռք բերել , որով աւելի քան մէկ դար սրանից առաջ վերածնունդ Ֆրանսայի կեանքին պատաստուած այդ սահմանադրական Ռամկավարութիւնը փակած իր սկզբնական խորհեղակերպին , քարացած վիճակի մէջ մնացել և ժամանակի ընթացքի հետ մէկ քայլ անդամ չի առաջդիմել , չի զարգացել և ի նպաստ ժողովուրդի ու մարդկութեան արդի պահանջներին և ոչ մի բան երեւան չի բերել :

Նա , ջատագով «Ազատութեան , Հաւասարութեան և Եզրայրութեան» , բայց և միշտ ամենաթունը պաշտպանն է կեղ

այդ «Ազատութեան և Հաւասարութեան» կապերը խանգարող դասակարգերին , մի բան , որ իր էութեամբը հակառակում է Սօցիալ Դէմօկրատիայի հիմնական սկզբունքին , այն է ԴՍՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ :

Այսպէս , ինչպէս տեսնում ենք , մեր քննադատութեան առարկայ կողմ երկու կուսակցութիւնները , իրենց հիմնական տեսակէտներով բոլորովին միմեանց հակառակ դիրքի մէջ են գտնուում :

Սահմանադիր Ռամկավարութիւնը յանուն ժողովուրդի պահանջում է ՊԱՀՊԱՆԵԼ ԴՍՍԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ և հաշտեցնել նրանց շահերն ու յարաբերութիւնները զանազան բարեփոխումներով և օրէնսդրական կարկատաններով , իսկ Ռամկավար Ընկերավարութիւնը ( Սօցիալ Դէմօկրատիոն ) մարդկութիւնը անտեսական և քաղաքական կաշկանդումներից ու գերութիւնից ազատելու համար պահանջում է ԲՆԱՋՆՋԵԼ ԴՍՍԱԿԱՐԳԵՐԸ և ազգային հաստատութիւններն ու վարչական գործերը վերջնականապէս ընկերվարացնելու համար այժմէն իսկ ռամկավարացնել պետական կազմը և հաստատել իսկական ժողովրդապետութիւնը :

Բայց ինչո՞ւ այս անազն տարբերութիւնը և հեռաւորութիւնը երկու ռամկավար մարմինների հիմնական տեսակէտների և հայեացքների մէջ : Որովհետեւ Սահմանադրական Ռամկավարութիւնը , որ ներկայացնում է այսօր մի որս զասակարգի շահերը , չի կարող դասակարգերի բնաջնջումն ընդունելով , ընդունէ նաեւ իր սեփական գոյութեան անյայտացումը : Ընկերային կազմի մէջ ունէ իր սեփական դասակարգային շահերը և այդ շահերի տեսակէտով է որ նա միշտ և առէն աւթիւ յանուն ժողովուրդի հրապարակ է դալիս , որպէս Ռամկավար , ժողովրդապետական են . :

Ընդունելով Սահմանադիր Ռամկավարութեան սկզբունքը աւելի քան մէկ դար առաջ , Ֆրանսական և Ամերիկեան յիշդափոխութեան նախօրեակին իր տեսակին մէջ է՞ն ժողովրդ-

դանպատ և մարդանէքն էր : Սակայն երբ նկատի առնենք բնաշրջման օրէնքի համաձայն մարդկային կեանքի մէջ տեղի ունեցած ա՛յն անազնի քաղաքական ու տնտեսական փոփոխութիւնները , որոնք մէկ դարու ընթացքում տակն ու վրայ անելով յեղաշրջեցին թողնուող աշխարհը , այն ժամանակ պատի տեսնենք որ Սահմանադիր Ռամկավարութեան պահանջած արքայական , ազնւական և կղերական երջեակ դասակարգերի քաղաքական իշխանութեան սահմանափակումով միաժամանակ և շնորհիւ տնտեսական յեղաշրջման , ընկերային կեանքի մէջ ծնունդ առաւ մի նոր բռնապետութիւն , որը քաղաքականի փոխարէն յափշտակեց տնտեսական ղեկը և արքայական իշխանութեան փլատակների վրայ հիմնեց կապիտալի , սեփական հարստութեան կեդրոնացման բռնապետութիւնը , կապիտալիզմը՝ որի շնորհիւ ծնունդ առան նոր դասակարգեր , քաղաքական ու տնտեսական նորանոր պահանջներով բեռնաւորեա՞ծ .

Ճիշտ է որ տապալեցին քաղաքական բռնապետութիւնները , սահմանի մէջ անցան օրէնքները և ժողովուրդը մասամբ մասնակցեց իր գոյութեան հետ խաղացող օրէնքների հաստատութեանը , բայց միեւնոյն ժամանակ շահագործող դասակարգը մնացած որպէս շահագործող , միայն տարբեր ձևեր տակ , իսկ շահագործող ընչազուրկը նոյն թշուառը , ինչ որ կար նա ազատութեան նախօրեակին :

Եւ հետեւաբար գոյութեան պայքարը մարդկային կեանքի այս նոր շրջանի մէջ իրեւան բերեց դասակարգերի բաժանման և դասաւորումի նոր ձև , որի հետեւանքով ու շրջանորհիւ կապիտալի կեդրոնացման , այսօր մեր առաջ են կանգնած երկու որոշ դասակարգեր , կապիտալիստ շահագործողը և ընչազուրկ գործաւորը : Իսկ այս երկու դասակարգերի մէջտեղ գոյութիւն ունի նաև մի երրորդ անգոյն դասակարգ , մանրաբուրժուա(փոքր հարուստ) , որը իր հարստանալու ձգտումներով , որպէս կապիտալիստ , իսկ տնտեսական բարեշրջման մե-

քենաների մէջ դէպ ընչազուրկութեան դիմող՝ ամէն ճիգ թափում է իր երկու կողմերում կանգնած երկու հակառակ դասակարգերը , կապիտալիստը և գործաւորը միմեանց մտակցնելու և նրանց շահերը եթէ ոչ միախառնելու , գէթ հաշտեցնելու : Եւ այդ էլ ոչ թէ մարդասիրաբար , այլ ի սէր իր սեփական գոյութեան պաշտպանումին . . . : Եւ լեկեց այդ դասակարգն է , որ այսօր ներկայացնում է Սահմանադրական Ռամկավարութիւնը , որը իր գոյութիւնը ապահովելու նպատակով պահանջում է պահպանել նաև բոլոր դասակարգերի գոյութիւնը , ինչքան էլ որ հակառական և վնասակար լինին նրանք և իրենց գոյութիւնը :

Վ .

Մինչև այստեղ մենք պարզեցինք թէ նոյն ժողովուրդի պահանջներից բխած և ծնունդ առած , սակայն բոլորովին տարբեր և հակառակ ուղղութեամբ քշող երկու հոսանքների այն է՝ Լ՛նկերվարական Ռամկավարութեան և Սահմանադրական Ռամկավարութեան գոյութեան սկզբնապատճառները և երևան բերեցինք այն հիմնաքար պատանդանները , որոնց վրայ կանգնած՝ յանուն ժողովուրդի և մարդկութեան խօսում աշխատում և պայքար են մղում : Նրանցից առաջինը դասակարգային կռիւի և նոյն դասակարգերի բնաշրջման վերելքով բարձրանալով դէպ համամարդկային վերջնական փրկութեան և տնտեսական ու քաղաքական ազատութեան բարձունքը , իսկ երկրորդը նոյն դասակարգերի և առանձնաշնորհած տարբերի վնասակար գոյութեան պահպանումին լճացած , հնացած և յետագէմ դադափարաշաղով իր հետ միասին և ձգտում է ժողովուրդը , ազգը քարշ տալ դէպ յետ , քարացում , լճացում ու վերջապէս դէպ միջնադարեան խաւար հասկացողութիւն , ուր ամէն ինչ «ստեղծւած էր» լուի իշխող և շահագործող դասակարգերի համար , և որ հէնց այդ դասակարգային ապօրինի շահերը պաշտպանութեան համար ազգերի և համայնքների

ինքնագոյութեան հարցը ետապաշտութեան նեղ չըջաններինմէջ  
 սղմած նրանց գրգռում և լարում էին միմեանց դէմ, և նրանց  
 առաջ արեան մէջ ապահովեցնում այդ ՇՍ.ՂԵՐԸ :

Իսկ այժմ մենք պիտի աշխատենք լուսաբանել յիշեալ  
 երկու հոտանքների, կուսակցութիւնների ներկայ ուղղութիւ-  
 նը. նորաաակը գործելու ձեւերը և ներկայ ու ապագայ ակն-  
 կալիքիքները յանուն ժողովուրդների և ազգերի :

Անտեղի չենք տեսնում այս առթիւ շեշտելու նաև երկու  
 հոտանքների միջև գոյութիւն ունեցող մի այլ աչքառու տար-  
 բերութիւն, որ նրանց գոյութեան երկրորդ հիմնակէտը կարե-  
 լի է համարել, այդ՝ ընկերային և հասարակական կեանքի,  
 նրա պայմանների և պահանջների ու կարիքների ուսումնա-  
 սիրութեան հարցի ըմբռնում և նրանց գոհացում տալու ձեւն  
 ու չափն է, որն այսօր գործնական ասպարէզում երևան է  
 գալիս այդ կուսակցութիւններից ամէն մէկի հասկացողութեան  
 չափով, մի բան որ չափանիշն է նրանցից ամէն մէկի ընկեր-  
 գիտութեան և աշխարհահայեցողութեան :

Առ ի չգոյէ համամարդկային կեանքի լայն իմաստասի-  
 րութեան և նրա օրէ օր բնաչըջման ենթարկւող ու յեղաշըջող  
 պայմանների գիտութեան, Սահմանադրական Ռամկավարու-  
 թիւնը, ազգերի և ժողովուրդների մէջ միշտ կանգնած էմնում  
 միայնակ, անջատ և շոյիինիդմի նեղ սահմաններում կծկւած,  
 ուր նա կռնակը դարձրած դուրսի աշխարհում տեղի ունեցող  
 ընկերային պայքարի զանազան փուլերին, ու այդ ընկերու-  
 թեան տարբեր մասերի գոյութեան հարցին, աշխատում է այդ  
 մասին, ազգերի մէջ միշտ պահպանել անջատման այն խրա-  
 մատը, որ դարերի տնտեսական աւերիչ պայքարի անարդար  
 ձեռքն է պեղել և հաստատել : Այդ էլ երկու որոշ պատճառ-  
 ներով, նախ՝ որ Ս. Ռ. ք այսօր, կանգնած է մնում իր ծը-  
 նունդի ա՛յն հողի վրան, ուր չկար ընկերագիտութեան արդի  
 բազմակողմանի ուսումնասիրութիւնը, երկրորդ՝ որ ամէն ազ-  
 ցի մէջ գոյութիւն ունեցող Ս. Ռ. ք իր դասակարգային ի-

բաւանց պահպանումը ապահոված է գտնում ազգերի անջատ  
 և կղզիացած վիճակում միայն, այդ պատճառով իսկ նա միշտ  
 ու ամէն ազգի մէջ մնում է լոկ Ա.ՁԳ.Ա.ՅԻՆ և ոչ հ ա մ ա-  
 մ ա ղ կ ա յ ի ն կամ մ ի ջ ա զ գ ա յ ի ն :

Սխնչեւ Ռամկավար Ընկերվարութիւնը դիտական հետազո-  
 տութեամբ գտնելով, որ ազգերի մէջ գոյութիւն ունեցող հե-  
 ու ուրութիւն և կղզիացումը լինելով պարզ արդիւնքը տնտե-  
 սական պայքարի և այդ պայքարը յաւերժացնելու ձգնող,  
 շահագործող դասակարգի վատ ու մարդուեր ձգտումներին,  
 նա եկել է ա՛յն վերջնական կզրակացութեան և որոշմանը,  
 որ համախարդկային ազատագրութիւնը արդի ընկերային վատ-  
 թար և անարդար հասարակակարգերից կիրականանայ ա՛յն  
 ժամանակ միայն, երբ այդ անջատ մարմինները, միմեանց  
 զարգացման ու բնական առաջադիժութեան արդէլքները ըս-  
 տեղծող ազգերը, իրենց գոյութեան նեղ սահմաններից դուրս  
 կը հետաքրքրւին միմեանց ցաւերի ու թշւառութեան պատ-  
 ճառներով և միացած ուժերով կաշխատեն տապալել արդի  
 հասարակակարգերը, նրան փոխարինելու համար համաշխար-  
 հային և ընկերական այնպիսի կարգերով, որոնցմով մարդկա-  
 յին զանգածը կը կարողանայ վերջնականապէս հաւասարու-  
 թեան հողի վրայ վայելել իր ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂԸ : Եւ  
 հէնց այդ նպատակով Ռամկավար Ընկերվարութիւնը պահ-  
 պանելով բոլոր ազգերի պատմա-տնտեսական գոյութիւնը և  
 հաւատում է ՄԻՋ.Ա.ՁԳ.Ա.ՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ, որպէս ընկերվա-  
 րութեան գլխաւոր մի ԼՄԱԿ :

Եւ այսպէս, մենք տեսնում ենք, որ Սահմանադրական  
 Ռամկավարութիւնը նախ իր դասակարգային գոյութիւնը  
 պահպանելու համար ժխտում է դասակարգային պայքար, երկ-  
 րորդ՝ որ նա զուտ Ա.ՁԳ.Ա.ՅԻՆ է որովհետև հէնց այդ ազգի  
 մէջ նա թաղելով իր ընկերագիտական մարձատեսութիւնը  
 ապահովել է երազում իր անբաւական քաղաքական ուժտըն-  
 տեսական շահերը :

Իսկ միևս կողմում, Ռամկալար Ընկերվարութիւնը ազգերի և ընդհանուր մարդկութեան ազատագրութեան մեծ գործը նիւնում է նախ՝ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԲՆԱԶՆՁՄԱՆ և ապա ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅԱՆ ՊԱՅԳԱՐԻ ՎՐԱՅ :

Անա զլիսաւոր և նիւնական տարբերութիւնները, որ գոյութիւն ունեն այդ երկու հոսանքների միջև :

Իսկ այժմ կը դառնանք հայ կեանքի մէջ նրանց ստանձնած դերի, նպատակի և կատարելիք գործերին, ու մանրամասն բացատրութիւններով ժողովուրդի առաջ լուսաբանենք այն երկու տարբեր ուղիները, որոնցից Ա. Գ. Հնչակեանութիւնը, իսկ միւսով՝ իբր թէ Սահմանադրական Ռամկալարութիւնն է աշխատում առաջնորդել հայ ժողովուրդը դէպ իրական «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» :

Եւ այս նպատակի համար մենք այս տեղ համեմատութեան կը դնենք այդ երկու կուսակցութիւնների ծրագիրներից հակադիր մասերը միայն, դուրս թողնելով նրանից աւելորդ բացատրութիւնները հարկաւ : Ամենից առաջ վեր առնենք նրանց ծրագիրների նախաբանները, որոնք հարագատ արտայայտութիւններն են նրանց աշխարհայեացքի և լինկերագիտութեան . —

Հ Ն Ձ . Ս Օ Յ . Դ Է Մ Օ Կ Ը Ս Տ

Մարդկութեան ստուար մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր, արտադրող, ընչազուրկ (proletariat = բրօլէթարիաթ), դասակարգը որ ենթակայ է քարիթալիստ, սեփականատէր եիշխող փոքրաթիւ դասակարգին (bourgeoisie = պուրժուազի), իր կատարեալ ազատագրութիւնը (Emencipation կուսնենայ միմիայն այն ժամանակ, երբ արտադրողները իրենք

աէր կը դառնան արտադրութեան, շրջանութեան և հաղորդակցութեան բոլոր միջոցներուն — ինչպէս են՝ հողերը, գործարանները, հանքերը, պանքաները, վարկային հաստատութիւնները, երկաթուղիները ևն :

Ազատագրութիւն արտադրող դասակարգի՝ կը նշանակէ ազատագրութիւն ամէն մարդու առանց ազգի, ցեղի և սեռի խտրութեան, հետեւաբար և քաղաքական ու տնտեսական կատարեալ ազատագրութիւն ամբողջ մարդկութեան :

Քարիթալիստական կարգերէ յառաջացած տնտեսական քաղաքական և հասարակական ներկայ պայմանները իրենց մէջէն բնական կերպով ծնունդ են առած սեփականութեան մէկ նոր ձեւի տարբեր, որով արտադրութեան բոլոր միջոցները պիտի պատկանին արտադրող դասակարգին :

Իր այդ պատմական նպատակին հասնելու համար արտադրող դասակարգը ամէն երկիրներու մէջ պէտք է կազմակերպուի որպէս քաղաքական ինքնուրույն կուսակցութիւն, ջանալով իր արամագրութեան տակ առնել հասարակական և քաղաքական բոլոր միջոցները ու բոլոր երկիրներու մէջ զբաւուող համանման կուսակցութիւններու հետ, ձգտի առաջ բերել Սոսիալական ( բնկերային ) յեղաւթումը :

Ընկերային այդ յեղաշրջմամբ արտադրող (բրօլէթարիաթ) դասակարգը՝ տիրանալով քաղաքական, տնտեսական և հասարակական բոլոր օրկաններուն և կատալարութիւնը ամբողջապէս կեդրոնացնելով իր ձեռքը, ՎԵՐՁ ՊԵՏԻ ԴՆԷ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ, հետեւապէս և ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՌԻՒՆ, ու այդպէսով պիտի հաստատէ սօսիալիստական հասարակական կարգերը :

Այդ կարգերէն բղխող ժողովրդային օրէնադրութիւնը իրական կարելիութիւն պիտի տայ ամբողջ հասարակութեանը և իւրաքանչիւր անհատին մշտամտելու, քննելու և վճռելու հասարակական բոլոր գործերը :

Նոյն այդ հասարակական կարգերն են որ լիովին և ան-

բնութարեղի կերպով պիտի նպաստեն իւրաքանչիւր անհատի  
և ամբողջ հասարակութեան անհատական, տնտեսական և  
հասարակական ուժերու, ընդունակութիւններու և կարողու-  
թիւններու բազմակողմանի ու կատարեալ զարգացմանը և  
ներդաշնակ ու որոշ կերպով պիտի կանոնաւորեն հասարա-  
կական և տնտեսական բոլոր յարաբերութիւնները :

Ահա այդ է արտադրող դասակարգին պատմական ճրգ-  
տունն ու նպատակը այն բոլոր երկիրներուն մէջ, ուր կը  
սիրէ արտադրութեան քարիթալիստական եղանակը, այդ է  
նաև բոլոր երկիրներու Սոցիալ-Դէմօքրատ կուսակցութեանց  
(Partie Social Democrite) ձգտումն ու նպատակակէտը :  
Նոյն հասարակական կազմակերպութեան է որ կը ձգտի Ս .  
Դ . Հնչակեան Կուսակցութիւնը Տաճկաստանի մէջ :

( Ծրագիր եջ 1-3 )

ՀԱՅ Ս . ՌԱՄԿԱՎԱՐ

Հայերու համար ալ — այն օրէն երբ Օսմ . Սահմա-  
նադրութեան վերահաստատումը և Սահմ . բէժիմի անխախտ  
պահպանութեան և իրապէս գործադրութեան ակնկալու-  
թեամբ և հետապնդումով, նախկին հայ յեղ . կազմակեր-  
պութիւնները կը վերածուէին նոյնպէս օրինական քաղաքա-  
կան կուսակցութիւններու , մասնաւորապէս զգալի եղած էր  
կազմութիւնը այնպիսի քաղ . կուսակցութեան մը , որ հետև  
մնալով ծայրայեղ աշխարհայեացեցեցէր և վիճելի ընկերային

վարդապետութիւններէ , հայ իրականութեան մէջ գործէր ժո-  
ղովուրդի գիտակից մասին հարազատ բաղձանքներուն համա-  
ձայն և ժամանակի պահանջման , համապատասխան տարա-  
մերժօրէն օրինական միջոցներով : Այսպիսի կուսակցութիւն  
մը միայն պիտի կրնար համախմբել իր շրջջ հայ անգգին գի-  
տակիչ տարւերը , առանց դաւանական կամ ԴԱՍԱԿԱՐԳԱ-  
ՅԻՆ ԽՏՐՈՒԹԵԱՆ :

( Ծրագիր եջ 3 )

Կուսակցութեան դրօշին տակ պարտաճանաչ հայ հարուստը ,  
ժրջան հայ աշխատաւորը և գիտակից հայ մտաւորականը  
անգգային ընդհանուր շահերու անձկուս կամաւորութեամբը  
ձեռք ձեռքի ուսած պիտի քալեն դէպի ընդհանուր նպա-  
տակը :

( Ծրագիր եջ 7 )

Արդարեւ , Օսմանեան երկիրներու տնտեսական զարգացման  
արդի վիճակը հեռու է ընկերվարական սկզբունքներու կրու-  
ւան ընծայելէ : Այս հանգամանքներու մէջ , Օսմանեան ժո-  
ղովուրդին բարօրութեանը ձգտող բոլոր ձեռնարկները կրնան  
պարփակելի սամկավարական ծրագրի պահանջներու սահմա-  
նին մէջ :

( Ծրագիր եջ 8 )

Ս.

Արմատագետ ըմբռնելու համար, թէ Հ. Ս. Ռամկավա-  
րական կուսակցութեան ընդգրկած սկզբունքը և նրա աշխա-  
րհահայեացքը: մինչեւ ո՛ր աստիճան է համապատասխանում  
ընկերային արդի բարդ վիճակին, և թէ նա մինչեւ ո՛ր աս-  
տիճան հակառական է և հետո՞ մարդկային սա հսկայական  
խառնարանի իրական ցաւերը ըմբռնելու և նրանց դարմանելու  
իմացականութիւնից. մենք այստեղ քննութեան կառնենք  
այդ կուսակցութեան ծրագրի՝ նախաբանից հետեւեալ կարե-  
ւոր և էական կէտերը, որոնք հիմնաքարերն են Ռամկավար  
Սահմանադրութեան սկզբունքի շինութեանը:

Ա. — Թէ՛ նա, Հ. Ս. Ռ. ը «նայ իրականութեան մէջ  
կարող է գործել ժողովուրդի գիտակից մասին հա-  
րազատ բաղձանքներուն համաձայն և թամանակի  
պահանջմանց համապատասխան...» (Ծր. էջ 3)

Բ. — «Այսպիսի կուսակցութիւն մը իր շուրջը համա-  
խմբելով ազգին գիտակից տարրերը առանց դաւա-  
նանքի և Գ.Ս.Ս.Կ.Ս.Ր.Գ.Ս.Յ.ԻՆ և ՍՏՐՈՒԹԵԱՆ» պիտի  
կարողանա՞ որդէս շտղաքական կեանքի ֆակտոր  
հրապարակի վրայ յարատեւ կեանք ցոյց տալ, մա-  
նաւանդ պիտի կարողանա՞յ Գ.Ս.Ս.Կ.Ս.Ր.Գ.Ս.Յ.ԻՆ իր շուր-  
ջը համախմբելու համար միացնել և ձուլել նրանց,  
(Ծր. էջ 3)

Գ. — Ս. Ռամկավար «գրօչին տակ պարտաճանաչ հայ  
հարուստք, ժրաջան աշխատաւորք և գիտակից հայ  
մտաւորականք» պիտի կարողանան ձեռք ձեռքի տաւծ  
քայիլ...» : (Ծր. էջ 7)

Դ. — Սահմանադրական Ռամկավարութիւնը ունի՞ որեւէ  
«ԸՆԴՀԱՆՈՒԻՐ ԵՊՍՏԱԿ» : (Ծր. էջ 7)

Ե. — «Արդարեւ, Օսմանեան Երկիրներու անտեսական  
զարգացման արդի վիճակը հետո՞ւ է ընկերվարական  
սկզբունքներու կուսան դառնալէ» : (Ծր. էջ 8)

Վեր առնելով Հայ ազգի իր ամբողջութեամբ, պիտի գըրա-  
նենք որ նա էլ, ինչպէս մարդկային ընկերութեան ուրիշ մա-  
սերը, շնորհիւ տիրող անտեսական անարդար վիճակի և հէնց  
Սահմանադրական Ռամկավարութեան սրբայրած «նախաւոր  
սեփականաւիրութեան» օրէնքին, հակառակ բանակների բա-  
ժանւած՝ լուրեան պայքարում և կուսում են միմեանց դէմ,  
մի կռիւ որ անխուսափելի անհրաժեշտութիւն է այս նիւթա-  
կան աշխարհի մէջ, քանի որ այն տեղ գոյութիւն կ'ունենայ  
մասնաւոր սեփականատիրութեան և յափշտակութեան անար-  
դար օրէնքները, հետեւաբար նիւթական աշխարհի այսպիսի  
մի քասասային վիճակի մէջ, ուր մարդկային հոգեկան ու մը-  
տաւոր վիճակը ինքնարեւարար զանազան ճիւղաւորումներով  
միմեանց են խաչաձեւում, ինչպէս և ինչ չըրաջով է որ  
Սահմանադրական Ռամկավարութիւն և կամ մի որեւէ երկ-  
նային կուսակցութիւն իսկ պիտի կարողանայ «ժողովուրդի  
հարազատ բաղձանքների» մի հոսանք ստեղծելով, գործել  
ժամանակի «պահանջմանց համապատասխան» :

Մի ժողովուրդի «հարազատ բաղձանք» երեւան բերելու  
համար, նախ պէտք է վերացնել այդ «բաղձանքը» ճիւղա-  
ւորող և հակառակ բանակները բաժանող դրդապատճառները,  
տիրող անհաւատարմութիւնը, համատարած անարդարութիւնը,  
և երբ վերայն գրանք, ա՛յն ժամանակ է որ, Թ.Ս.Ս.Կ.Ս.Ր.Գ.Ս.Յ.ԻՆ  
«հարազատ բաղձանքը» երեւան գալով պիտի կարողանայ  
«ժամանակի պահանջմանց համապատասխան» հաստատել ա՛յն-  
պիսի հասարակարդեր, որոնք վերջ դնէին արդի մարդկա-  
յին համատարած թշւառութեանը և նրա դառն վիճակին :

Եւ եթէ Ս. Ռ. ը, ըստ իր աշխարհայեցողութեան,  
պիտի հիմնել միայն «ժողովուրդի Գ.Ի.Տ.Ա.Ի.Յ մասին հարա-  
զատ բաղձանքներուն» վրայ, մի բան որ դժբաղդարար շատ  
թող և աննշան պիտի նկատել համազգային և համամարդ-  
կային վերածնութեան մեծ ձեռնարկի տեսակէտով, ապա ո՛ւր  
պիտի մնայ անգիտակից (ըստ մեզ զրկւած) մասը, որ այսօր

ընդհանուր աշխարհի 90 0/0 տողումն է կազմում: Եւ եթէ այդ լինի Ս. Ռ. Ն. ըմբռնումը, ապա նա ի՞նչ իրաւունքով ամբողջ ժողովուրդի և ազգի կամ ազգերի շահերի անունով է խօսելու, քանի որ նա միայն «ժողովուրդի գիտակից մասի հարազատ բաղձանքները: համաձայն է որ ուզում է գործել: Բայց հարց է թէ Հ. Ս. Ռ. Կ. ր իրաւունք պիտի ունենա՞յ իր բնորոշ «գիտակից մասի հարազատ բաղձանքը» երեւան բերել, որպէս համազգային և ժողովուրդական ամբողջ զանգւածի («հարազատ բաղձանքը») և արտայայտութիւնը նրա ցաւերի ու պահանջների, ո՛չ երբէ՛ք. որով այդ ձեւով Ս. Ռ. ը հաստատում է մի չնչին առանձնաշնորհած դասակարգի հոգու և մտքի, նրա ցանկութիւնների և «հարազատ բաղձանքի» տիրապետութիւնը մի այլ դասակարգի, անհամեմատ աւելի մեծ մի զանգւածի վրայ, այգպիսով յաւերժացնելով նաև մէկ դասակարգի նիւթական տիրապետութիւնը և շաշագործումի ապօրինի իրաւունքները միւսի վրայ, մինչդեռ Ընկերվարական Ռամկավարութիւնը ժխտում է մէկ դասակարգի ամէն ձեւի տիրապետութիւնը միւսի վրայ, և այդ առթիւ իսկ փնտռում է՝ չէ թէ ժողովուրդի «գիտակից դասի» (իմա բուրժուաների...) այլ ընդհանուր ժողովուրդի և ժողովուրդների («հարազատ բաղձանք»)ի գորաւոր հոտանքը համամարդկային վերջնական էմանսիպատիօնի (ազատագրութիւն) համար տիրող անարդարութիւններից:

Այս պարզ բացատրութիւնից յետոյ մենք գալիս ենք եզրակացութեան որ Սահմանադրական Ռամկավարութիւնը ընդհանուր ժողովուրդի անուկով և նրա համար չէ որ պիտի կարողանայ «նայ իրականութեան» մէջ գործել, այլ ինչպէս իր ծնունդից ի վեր և բոլոր ազգերի նոյնպէս և Հայութեան մէջ նա պիտի ներկայացնէ միայն և միայն բուրժուա, դրամատէր դասակարգի շահերը, և իր ամբողջ գործունէութեամբը պիտի ներկայանայ որպէս մարմնացումն այդ դասակարգի («հարազատ բաղձանքներ»)ին և պահանջներին, հետե-

ւաբար և հակառակող ընկերային կազմի իրական առաջադիմութեան բոլոր շարժումներին, «բաղձանքներին» ու ձրգտումներին:

Այս այսպէս լինելուց յետոյ դառնանք մեր քննադատելիք Բ. կէտին, որով Ս. Ռ. ը ճգնում է իր «չուրջը համախմբելով ազգին գիտակից տարրերը առանց դաւանանքի և ԴՆՍՍԿՍՐԳԻ ԽՏՐՈՒԹԵԱՆ գործելու, որպէս մի քաղաքական կուսակցութիւն:

Ի՞նչ են և որո՞նք են այն դասակարգերը, որոնք այք գոցելով իրենց դարաւոր անտեսական և քաղաքական հակադիր շահերից և գան ու բոյորեն Սահմանադրական Ռամկավարութեան դրոշի շուրջը: Այս հարցն ամենակարեւոր հարցերից մէկն է, որի վերլուծումը միայն բաւական է երեւան բերելու Ս. Ռ. Ն. սկզբունքների անիրագործելիութիւնը և նրա հակասական վիճակը:

Ահա թէ ի՞նչպէս:

Կասկած չկայ որ Ս. Ռ. Ն. պիտի յարեն կղերական, մանրաբուրժուա և տատանուող ու առանց հիմնական սկզբունքի տարրերը և երկրորդական դասակարգերը, բայց արգեօք այդ անդաստանի մէջ միմեանց պիտի մօտենա՞ն և հաշուին շաշագործողների, շահագործւողների, կապիտալիստի և աշխատաւորի երկու ընդհանուր հոտանքներն ու հսկայ բանակները, հարկաւ ո՛չ. և դրա պատճառներն էլ շատ պարզ են ու բնական:

Ս. Ռ. ը կարո՞ղ է ուրանալ այս երկու հակադիր դասակարգերի գոյութիւնը, եթէ նա այդ փորձը կանէ, մենք տյատուող կ'ապացուցանենք նրանց գոյութիւնը:

Աշխարհիս քաղաքակիրթ կոչուած մասերում գոյութիւն ունեցող մի քանի տամսեակ հազարներ զանազան գործարանների, հանքերի և բնական այլ եւ այլ հարստութիւնների շահագործումը մասնաւոր սեփականատէրերի կողմից ապացոյց է նրան, որ դերութեան ծանր չլթաներից և ճօրտու-

թեան անասնական վիճակից հազիւ ազատւած մարդկու-  
 թեան 90 % մասը որպէս ընչազուրկ, անօթի և մերկ զան-  
 գււած, իր թշուառացած գոյութիւնը քարշ տալու համար այ-  
 սօր մաշուում ու հալուում է հէնց այդ գործարանների և հան-  
 քերի մէջ, վաճառքի հանելով իր միակ սեփականութիւնը,  
 միակ ունեցածը՝ ֆիզիքական ուժը:

Այս պայմանների տակ հիմնւած ինդուստրիան ( ճարտա-  
 բարեկերպ ) ստեղծել է անտեսական այնպիսի անարդար ձե-  
 ւեր, որոնց միջոցով իսկական աշխատողի, աշխատաւորի  
 ֆիզիքական սպառումի տրդիւնքը հսկայ գետերի նման միա-  
 խառնւած կեղրոնանում են մի բուռ աննշան թիւ ներկայա-  
 ցնող մասնաւոր սեփականատէրերի առանձնաշնորհւած գա-  
 սակարգի դրամատիրոջ ձեռքը, միւս կողմում անազորոյն  
 ճակատագրի քմահաճոյքին յանձնելով միշտ աշխատող, միշտ  
 ստեղծագործող բայց և այնպէս միշտ անօթի և ընչազուրկ  
 անազին մեծամասնութիւնը:

Աշխատանքի եւ սեփականատէրութեան այս անարդար դա-  
 սաւորումը անխուսափելիօրէն պիտի ստեղծէր և երեւան բե-  
 բէր արդի հսկայ ու համատարած այն երկու դասակարգերը,  
 որոնց մէկը՝ մեծը և զօրաւորը շնորհիւ իր սեփականազրկու-  
 թեան, կաշկանդւած է օրավարձի շղթաներով, իսկ միւսը,  
 փոքրամասնութիւնը՝ իրաւունքով ու ֆիզիքայէս տկար մա-  
 սը շնորհիւ իր կապիտալի և նրա ստեղծած բացառիկ չօրէնք-  
 ների անխղճօրէն քամելով աշխատաւոր դասակարգը, նրա  
 նօթութեան, արեան ու թշուառութեան ծոցից հանելով իր սե-  
 փականութեան կեղծ կնիքը կրող մասնաւոր սեփականու-  
 թիւն եղող անբաւ հարստութիւնը, ապրում է ծոյլ անաշխատ  
 սակայն աշխատանքի և կեանքի անսպառ վոյելքների մէջ  
 խեղդելու չափ շոտյլ, փարթամ և շուտ մի կեանք:

Եւ այս իրողութիւնն այնքան բացայայտ և այնքան  
 ցայտուն է, որ նոյն իսկ կոյրերը և մասնաւորապէս բթա-  
 ցածնային իսկ չպիտի կարողանան ուրանալ, զի այդ անար-

դարութեան խայթը նրանք զգում են իրենց կաշու, իրենց  
 մարմնի և հոգու վրայ. ամէն անգամ որ նրանք իրենց նօ-  
 թութիւնը յազեցնելու և մերկութիւնը ծածկելու համար ի-  
 րենց մարմինն ու մկանունքը «ազատ պայմանաւորման օրէն-  
 քով» վաճառում են չաշխատող գործարանատիրոջ կամ գոր-  
 ծատիրոջ . . .

Արդ, անտեսական և քաղաքական շահերով միմեանց  
 բողոքովին հակառակ կանգնած այս երկու գլխաւոր դասա-  
 կարգերի գոյութիւնը, համայն աշխարհի և բոլոր ազգերի և  
 զովուրդների մէջ, եթէ իրենց մատերիալական ազդեցու-  
 թեամբը անուրանալի և զգալի է եղել նոյն իսկ կոյրերին ու  
 բթամիտներին. ապա ս'ըջափ զգալի պիտի լինէր մարդկային  
 զանգւածի վիճակի դաճնութիւնը թեթեւացնելու համար սահ-  
 մանագրական ճիգերով օրէնքներ հաստատելու ձգտող Ռամ-  
 կավարութեան համար: Եթէ նա չի նկատել այդ դասակար-  
 գերի գոյութիւնը, ուրեմն նա անձանօթ է ընկերային կեան-  
 քի արդի պայմաններին, հետեւաբար ԻՐԱՆՈՒՆԿ ԶՈՒՆԷ  
 յանուն այդ ընկերութեան հրապարակ գալու: Եսկ եթէ նը-  
 կատել ու զգացել է նրանց գոյութիւնը ու այնպէս է նա աշ-  
 խատում իր «գրօշի շուրջը համախմբել ազգի գիտակից մասը  
 առանց դաւանանքի և դասակարգի խտրութեան», ուրեմն նա  
 դիտաւորեալ կերպով կեղծում է և ազաւաղում իրերի ներ-  
 կայ վիճակը. պարզապէս հաճեցնելու տիրապետող դասը:  
 Իսկ ինչ ամենից աւելին է, այն է որ, այդ երկու դասակար-  
 գերը միաժամանակ և «առանց դասակարգի խտրութեան» մէկ  
 գրօշի շուրջը բերելու համար, Ս. Ռ. ը պարտաւոր է նախ  
 նրանց միջեւ եղած «խտրութեան» իսկական դրդագատձառ-  
 ները, անտեսական տարբերութիւնը վերացնելու և անյայ-  
 տացնելու, որից յետոյ է միայն որ նրանք, այդ դասակար-  
 գերի շահերը միախառնելով իրենք ևս միասին պիտի գան,  
 և միացած ու միահամուռ կերպով աշխատեն համայն մարդ-  
 կութեան երջանկութեան համար, որի իրագործմանը ձգտում  
 է Ընկերվարական Ռամկավարութիւնը:

Արդ, ինչպէս տեսանք Սահմանադրական Ռամկավարութեան աշխարհայեացքի այն թէզը, որով նա ձգտել է ձեւացնում է իր «գրօշին շուրջը համախմբելու ազգի գիտակից մասը առանց դաւանանքի և դասակարգի խտրութեան», չէ թէ միայն անհիմն, հակասական, անբնական ու կեղծ է, այլ նոյն իսկ անկարելի և անիրագործելի, որովհետեւ այդ դասակարգերին միացնելու համար, ինչպէս ակնարկեցինք, պիտի վերացնել նրանց մէջ գոյութիւն ունեցող անտեսական հիմնական խտրութիւնները, մինչդեռ Ս. Ռ. ը չէ թէ այդ նրկատմամբ լռելեայն անհամաձայնութիւն է յայտնում, այլ նոյն իսկ իր ծրագրի որոշ մասերով պաշտպան է կանգնում կապիտալի մարդակեր առանձնաչնորհմներին և բոլոր թըշուառութեանց աղբիւր եղող մասնաւոր սեփականացիութեան անարդար օրէնքին: Մինչդեռ այդ արժատակն յեղաշրջումի և դասակարգերի միջից խտրութիւնը վերացնելու համար հետեւեալն է ծրագրել Ս. Գ. ընկերվարական Ռամկավարութիւնը բոլոր ազգերի և ժողովուրդների կեանքի մէջ:

«Ազատագրութիւն արտագրող դասակարգի՝ կը նշանակէ «ազատագրութիւն ամէն մարդու, առանց ազգի, ցեղի և սեռի խտրութեան, հետեւաբար և քաղաքական ու անտեսական կատարեալ ազատագրութիւն ամբողջ մարդկութեան».

«Քարիթիալիտական կարգերէ յառաջացած անտեսական, «քաղաքական և հասարակական ներկայ պայմանները իրենց «մէջէն բնական կերպով ծնունդ են տւած սեփականութեան «մէկ նոր ձեւի տարրերու, որով արժարութեան բոլոր միջոցները պիտի պակասին արժարող դասակարգին:

Գալով մեր քննադատելիք Գ. և Գ. կէտերին, այսքանս պիտի ասենք որ Ս. Ռ. Կ. ն «գրօշին շուրջը» անպայման պիտի հաւաքեն («այ հարուստները» բայց ոչ նայ ժրաջան աշխատաւորը և գիտակից նայ մտաւորականը», որովհետեւ նայ հարուստը պաշտպանութիւն պիտի գտնէ իր շահերի, «հարողատ բաղձանք»ների այդ մարմնացումի, Ս. Ռ. ն մէջ,

մինչդեռ նայ աշխատաւորը և ընչազուրկ մտաւորական ու հողազուրկ գեղջուկի շահերը պիտի բաղխին և ընդհարելն հարուստի, կապիտալիստի շահերին և ապա նրա գոյութիւնը պիտի վտանգւի այդ գրօշի տակ...»

Իսկ թէ Ս. Ռ. ը ունի՞ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ», մենք պիտի ասենք թէ ոչ:

Ինչպէ՞ս կարող է մի անհատ կամ կազմակերպութիւն որ և է «ընդհանուր նպատակ» ունենալ երբ նա երեւան կգայ տիրող անարդարութիւնները պաշտպանելու ի նպատակ անիրաւող դասակարգին, որն իր ամբողջութեամբ չէ՞ թէ ընդհանուր, այլ մասնակի և միակողմանի բնութիւնով ունի, միայն թէ Ս. Ռամկավարութիւնը «ընդհանուր նպատակ» չողջողուն բառերի տակ կամ անգիտակցաբար ինքնախաբէութիւն է կատարում կամ գիտակցաբար դէպի սխալն է ուղղում ժողովուրդի հասկացողութիւնն ու ըմբռնումը:

Եւ քանի որ չկայ «ընդհանուր» նպատակ» հետեւաբար և վնասակար է այդ քողի տակ ծածկւած որ և է գործողութիւն, լինի նոյն իսկ ժողովուրդի և ժողովուրդների անուհով:

Եթէ կայ ընդհանուր նպատակ, ընկերային կեանքի վերըստեղծումի նկատմամբ, այդ էլ սեփականութիւնն է ընկերվարական Ռամկավարութեան, որը մարդկային վերջնական ազատագրութիւնը հիմնում է միջազգային, համամարդկային աշխատութեան վրայ:

Արդարեւ, Օսմանեան երկիրներու անտեսական զարգացման արդի վիճակը հեռու է ընկերվարական սկզբունքներու կիրառութեան կուսան ընծայելէ. ասու՛մ է Սահմանադրական Ռամկավարութիւնն իր ծրագրի էջ ծի մէջ:

Ասել է թէ՛ Ս. Ռ. ք խոստովանում է որ, թէ՛եւ Օսմանեան երկիրներու արդի վիճակը հեռու է ընկերվարական սկզբունքներու կիրառութեան կուսան ընծայելէ, բայց և այնպէս պիտի գայ մի ժամանակ, որ այդ բանը կատարած մի իրողութիւն պիտի դառնայ և ընկերվարութիւնն իր գործունէութեան կուսանը պիտի ունենայ Օսմանեան կեանքի մէջ, և այդ օրը ա յն ժամանակ է, երբ այդ «երկիրներու անտեսական արդի վիճակը» կերպարանավորուելով, կապիտալի հաստատութիւնով և զարգացումովը կը զարգանայ և որոշ ու ցայտուն կերպով երեւան կգայ նաև դասակարգային կռիւը շահագործողի և շահագործւողի, կապիտալիստի և աշխատաւոր մասսաների միջեւ:

Ընդունելով այս տրամաբանութիւնը, միւս կողմից պիտի տեսնենք, որ Ս. Ռ. ք ինքն է որ այսօրւանից իսկ իր նախազգուշութիւնների և խուսափումների ամբողջ ու ժովը, թէ՛եւ անգիտակցարար, բայց և այնպէս ընկերվարական սկզբունքների կիրառութեան կուսան և բերրի հողէ պատրաստում իր «հիմնական սկզբունքներին» հետեւեալ կէտերովը:

Ս. Ռ. ք կ'որդեգրէ գործնականին մէջ դրամագլուխի, աշխատութեան եւ արդիւնի կամաւոր ընկերակցութեան (association volontaire du capital, du travail et du talent) սկզբունքը:

«Կը հանդիսանայ պաշտպան անտեսական բարենորոգումներու հետամտութեամբ՝ առհասարակ աշխատաւորի շահերուն, ինչպէս ՔԱԶԱԼԵՐՈՂ, ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ԱՐԳԻԻՆԱ-

ԻՈՐՈՒԹԵԱՆ, գոհախելու համար երկրին արդի անմիջական պէտքերը, ստանց չեղելու ռամկավարական սկզբունքներէն» : (Ծրագիր էջ 11):

Ասել է թէ՛ Սահմանադրական Ռամկավարութիւնը իր սկզբունքի և գործունէութեան հիմնական պայմանները և ազգի ու օսմանեան ընդանուր ժողովուրդի գոյութեան և նրա զարգացման հիմնաքարերն է ընդունում նախ՝ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ և ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՄԱԻՈՐ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ և երկրորդ՝ քաջախեռումն ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ԱՐԳԻԻՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ:

Այս դէպքում ինքնաբերաբար երեւան են գալիս երկու պարզ և որոշ բաներ. Ա. ) այն որ Ս. Ռ. ք ինքը գործնականին մէջ հակասում է իր սկզբունքին և Բ. ) հէնց ինքն է որ երկրի անմիջական պէտքերը հոգալու համար կապիտալի զարգացմանը հետամուտ լինելով ճանապարհը պատրաստում է ընկերվարական սկզբունքների համար:

Բացատրենք մեր ասելիքը պարզ և դիւրահասկանալի որքան կարելի է:

Ընդունելով որ՝ Թիւրքիայի վարչական, զինւորական, կրթական և հանրային այլեւայլ հաստատութիւնների բարեփոխութեան, վերանորոգումի և զարգացման անմիջական կարիքները լեցնելու համար երկիրը պիտի հարկադրւի իր ընտանի և աղքային հարստութիւնները, որոնք են հանքերը, անտառները, ճանապարհները, ծովային ու ցամաքային փոխադրութեան միջոցներն ու հսկայական գետերի ու լիճերի ջուրերի ուժերը դնել ներքին (որ կասկածելի է) կամ արտաքին կոպիտալի (դրամագլուխի) տրամադրութեան տակ. այն էլ, ասենք թէ՛, Ս. Ռ. ք «քաջալերութեամբ» և կամ ուղղակի նրա ջանքերովը, (թէ՛եւ կապիտալի մուտքը Թուրքիայի մէջ անխուսափելի և հրամայական մի պահանջ է) այս դէպքում չէ՛ որ Ս. Ռ. ք հակառակ իր չափաւոր ձգտումներին և յետագէ՛մ սկզբունքներին, ինքն է որ գալիս է օգնելու և նոյն

խոյ փութացնելու գրամագլուխի կատարելիք աւերիչ դերը հանդէպ ժողովուրդի ա՛յն հսկայական մեծամասնութեան և գիւղացիների այն անաւոր բազմութեանը , որոնք հողագործի և ընչազուրկ վիճակի մէջ , կապիտալի երեւումով պիտի զրկւին նաև իրենց նահապետական ինքուստրիայի (ճարտարարւեստի) ձևերից և միջոցներից ու սհագին բանակներով պիտի խոնւին հանքերի , անտառների , զանազան գործարանների և երկաթուղիների և այլ և և այլ ինքուստրիական հաստատութիւնների մէջ , այդպիսով և անխուսափելիորէն Թուրքիայի ժողովուրդը երկու որոշ դասերի վերածելով , ինչպէս այդ կատարւած է այսօր Եւրոպայի և Ամերիկայի մէջ , այն է կապիտալիստը և պրօլետարը , անսիրա և շահամոլ աշխատեցնողը և նօթի ու զրկւած աշխատաւորը :

Կարելի՞ է ուրանալ այս գալիք անախորժութիւնը և խուսափել կապիտալի գործունէութեան այդ հետեւանքից , ո՛չ : Ինչո՞ւ , որովհետև գրամագլուխի մուտքը ընդունում ենք երկրի մէջ որպէս անհրաժեշտութիւն և միջոց հէնց յիշեալ հանրային և ազգային հարստութիւնները շահագործելու միակ նպատակի համար , որպէս զի այդ շահագործումի արդիւնքովը հողալ կարողանանք երկրի անմիջական պէտքերը , և այդ շահագործումը կը կատարւի ա՛յն ժամանակ միայն , երբ տեղական ժողովուրդի ընչազուրկ և կարօտ հսկայ մասի ֆիզիքական աշխատութեան ուժը կը վաճառւի գրամատիրոջը , այդպիսով կապիտալը պրօլետարի աշխատութեան հրաշայի ուժն իր ափի մէջ առած՝ պիտի կարողանայ շահագործել , շահել և այդ շահից մի մասն էլ բաժին հանել երկրի պէտքերին : Եւ այս դէպքում պիտի հաւատանք , որ Ս . Ռ . Պ . յաջողել է «գրամագլուխի և աշխատութեան կամաւոր ընկերակցութիւն» ստեղծել :

Մէկ պատահ չոր հացի համար ֆիզիքական ուժի , աշխատութեան և կեանքի ու կենսունակութեան ուժը ծոյլ և չաշխատող գրամատիրոջ ԾՄ.ԿԵԼԸ «կամաւոր ընկերակցու-

թիւն» կարելի՞ է անւանել . հարկաւ ոչ , այլ ՎՍՐՁԱԳՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆ , որի շնորհիւ է միայն , որ Թուրքիայի ժողովուրդի մէջ անխուսափելիորէն երեւան պիտի գայ կամաւորի , քամուղ ու շահագործուող և անտեսապէս տիրապետողի դժգոնութիւնը , պայքարը հանդէպ իր շահագործողի . մէկ խօսքով պիտի ստեղծւի դասակարգային կռիւր , Սահմ . Ռամկավարութեան քաջնորութեամբը , և ի նպատտ ընկերվարական սկզբունքի իրագործման , որովհետև հէնց այդ դասակարգային կռիւն է . որ ընկերվարութեան սկզբունքների կիրառութեան կուսանս նրա ԳԵՐՈՒԳՈՅՆ ՆՊՍՏԱԿԻ Իրագործման որպէս միջոց է ընդունւած , հետեւաբար Ս . Ռ . Պ . հակառակելով հանդերձ ընկերվարութեան , նա ինքն է որ այդ վարդապետութեան իրականանալուն այսօր ճանապարհ է պատրաստում , հետեւաբար և հակասում՝ իր չափաւոր մշտքերին ու բուրժուապահպանողական սկզբունքներին ,

Այսպէս , թէեւ Ս . Ռ . Պ . խօսքով և սկզբունքով աշխատում է ժխտել ընկերվարութեան սկզբունքի էականութիւնը և զրանալ նրան գործելու հողը Թուրքիայի կեանքի մէջ , բայց նա ինքը գործնականապէս , թերեւս ակամայ և անգիտակցաբար , ապացուցում է ընկերվարութեան պէտքը այդ երկրի մէջ և նրա համար , կապիտալի մուտքովը նոյն իսկ կուսան և գործելու փառաւոր հող է պատրաստում այսօր :

Այս այսպէս լինելուց յետոյ չենք կարող չհարցնել թէ արդեօք ընկերվարութիւնը գոյութիւն ունի՞ թէ ոչ : Բացառական պատասխանն ոչ ոքից պիտի սպասենք , քանի որ այսօր 9,000,000 ընկերվարական քւէների զօրութեամբ հազարաւոր երեսփոխաններ , ծերակուտականներ , նախարարներ և պետական կարեւոր պաշտօնեաներ են Եւրոպայի և Ամերիկայի մէջ որ գրաւում են ընկերվարական աթոռները : Հետեւաբար եթէ այդ ընկերվարութիւնը ընդունւած է ընկերային հասարակակարգերի դէմ պայքարելու միջոցներից ամենաառաջադէմը և նպատակայարմարը Եւրոպայի և Ամերիկայի ազ-

գուլթիւնները մէջ, ապա ինչո՞ւ նոյնը չպիտի ընդունել նաև Թուրքիայի մէջ:

Թերեւս առարկւի թէ այդպիսի մի վարդապետութիւն, ընկերագիտութեան գիտական այդպիսի մի արմատական ձեւը յարմար է Եւրոպայի, սակայն վաղաժամ է Թուրքիայի համար:

Շատ լաւ, բայց մի՞թէ քաղաքական այդպիսի շարժումներու և մարդկային ընկերութեան ճակատագրի ղեկավարութեան այդպիսի կարեւոր վարդապետութիւնները մանանաներ են, որ երկրից յանկարծակի իջնէին որեէ ժողովուրդի մէջ. չէ՞ որ այդպիսի մի բան պիտի ունենայ իր սկզբնաւորութիւնը թէեւ խոչնդոտների և դժւարայաղթ արգելքների հետ պայմանաւորած: Չէ՞ որ Եւրոպայի ամեն մի ազգի և երկրի մէջ նոյնը. Թերեւս աւելի մեծ վայնասուններ բարձրացան ընկերվարութեան ծագումին դէմ, սակայն այսօր հէնց այն տեղերում այդ վարդապետութիւնը կէս դարու ընթացքում գրաւել է իր որոշ տեղը և քաղաքային կեանքի մէջ կատարում է ամենակարեւոր դերը:

Վեր անենք Գերմանիան, ուր ընկերվարութիւն և ընկերվարականները աւելի քան ուրիշ որեէ տեղ էնալածուել, չարչարել և նոյն իսկ յաճախակի աքսորել են երկաթի և սուրի ուժով, բայց և այնպէս այսօր հէնց այդ երկրի Բայխատակում, երեսփոխանական ժողովի մէջ, աւելի քան 100 հոգի ընկերվարական երեսփոխաններ բազմելով 3,000,000 ընկերվարական քւէների ուժով վարչական նժարը մընչև ընչազուրկ ժողովուրդի կողմն են յակեցնում. և մի՞թէ այդ հսկայական ուժը այդ երկրի մէջ երեւան եկաւ խաթեր համար և կամ քաղաքական ու տնտեսական բռնակալութեան բարձրագոյն շնորհներով, ո՛չ, այլ շնորհիւ նրան, որ Գերմանիան 48ի յեղափոխութիւնից յետոյ, կապիտալի մուտքովը զարձաւ գործարանների մի երկիր և այդպիսով տնտեսական անարդարութեամբ երեւան բերեց երկու գլխաւոր դասակար-

գերի պայքարը միմեանց դէմ և դրա հետ գուլթնթացարար և ընկերվարութեան անհրաժեշտութիւնը: Եւ այսօր այդ երկրի վիճակը ոչ թէ միայն «Ընկերվարական գործունէութեանց կուսն է ներկայացնում», այլ նոյն իսկ այդ վարդապետութեան յաղթութեան համար առաջապահ մի գորաւոր և անյաղթելի բանակ է պատրաստում:

Այժմ ընական, պատմական և գիտական ինչ փաստով պիտի կարողանանք համոզուել, որ Թուրքիայի մէջ չպիտի կրկնուի նոյնը, ինչ որ տեղի ունեցաւ Գերմանիայի մէջ, մինչ դեռ այս վերջինում ընկերվարութիւնը ենթարկւած էր քաղաքական ամենակատաղի հալածանքի, իսկ Թուրքիայի մէջ նա այսօր վալելում է համեմատաբար լայն ազատութիւն. բացի այդ, Թուրքիան իր տնտեսական քայքայուած վիճակովը աւելի գոյութեան իրաւունք է սալիս ընկերվարութեանը քան Գերմանիան. ուրեմն էլ մեր մնաց «Արդարեւ», օսմանեան երկիրներու տնտեսական զարգայման արդի վիճակը հետու է ընկերվարական սկզբունքներու կիրառութեան կուսն գառնալէյները:

Մենք համոզւած ենք որ Թուրքիայի հէնց ներկայ վիճակն է որ անհրաժեշտ պահանջ է դարձրել ընկերվարութիւն այդ երկրի համար, և թէ նրա ժողովուրդը համաշխարհային փրկարար շարժումից գրկուելու և ընկերային կեանքից չանյայտանալու համար պարտաւոր է այս օրւանից իսկ միանալ պայքարող բանակի հետ ընդդէմ ծնունդ առած կապիտալիզմի որի բռնութիւններու դէմ զնելու համար, նա, ժողովուրդը, պարլամէնտի և օրէնսդրական մարմնի մէջ պիտի աշխատէ դնել իր իսկական ցաւերը և պահանջները ներկայացնող ընկերվարականներ և ոչ թէ չափաւոր, բուրժուա-պահպանողական Ս. Ռամկավարներ, որոնց սկզբունքը և գոյութեան նպատակն է միայն ԻՐՆՆՑ տնտեսական միջակ և նոյն իսկ քայքայման դուռը հասած վիճակը ապահովելով միջնորդի դերը կատարել խոչոր ամենազօր կապիտալիստի և ընչազուրկ

ու անօթի աշխատութեան մըջեւ , մի բան , որի իրագործումը կասկածելի և նոյն իսկ անիրագործելի է Սահմանադրական Ռամկավարութեան սկզբունքով ու հասկացողութեամբ :

Ս . Ռ . ք հրապարակ է դնում մի այլ անիրագործելի և հակասական բան , այն է , « Դրամագլուխի , աշխատութեան և տաղանդի կամաւոր բնկերակցութիւնը » :

Չկայ աշխարհի մէջ մի ուժ , մի գորութիւն , մի գերբնական ձեռք , որ կարողանայ « կամաւոր ընկերակցութիւն ստեղծել դրամագլուխի , աշխատութեան և տաղանդի » միջեւ , եթէ ոչ մտտերխաղական կաթիքը , և երբ երեւան եկաւ կարիքը , այն ժամանակ կ'աներեւութանայ կամքը և « կամաւորութիւնը » , և ընկերակցութիւնը կը գոյանայ ո՛չ թէ կամաւոր , այլ բռնադատուած և ակամայ , այն էլ կեանքի պէտքերը լեցնելու կարիքից մղւած :

Ս.հա թէ ինչու :

Դրամագլուխի պաշտօնն է ծախու առնել , գնել և ապա վաճառքի հանել՝ շահելու համար , իսկ աշխատութիւն և տաղանդը , մինչեւ այսօր և մինչեւ այն օրը որ կը շարունակի դրամագլուխի կեդրոնացումը , միշտ ներկայացել են և պիտի ներկայանան նոյն դրամագլուխի առաջ որպէս ապրանք կամ վաճառքի մի ճիւղական ճիւղ , որոնք դրամագլուխը իր շահերին համապատասխան պայմաններով ծախու պլտի առնէ կարօտ ու չքաւոր , և կեանքի կարիքից մղւած աշխատուորից և տաղանդաւորից և շահագործէ նրանց , և քանի որ աշխատութեան և տաղանդի ետեւում արձանացած է կԱՐԻՔԸ , հետեւաբար դրամագլուխը , կապիտալը պիտի աշխատէ ըստ կարելոյն աժան ու ցած գնով ծախու առնել այդ ապրանքը , որով և ընտանաբար ծախողի մօտ երեւան պիտի գայ դժգոհութիւնը և անյայտանայ կամաւորութիւնը : Ուրեմն ինչպէս տեսնում ենք , տնտեսական արդի վիճակում անկարելի և հակասական է « դրամագլուխի , աշխատութեան և տաղանդի կամաւոր ընկերակցութեան » ձգտելը . որի ճըշ-

մարտութեանը չենք ուզում հաւատալ , որ անտեղեակ է Ս . Ռ . ք , ինքը , հետեւաբար նա աշխատում է մեծ և սակեղօծ , անղարգացած մի ժողովուրդի համար անհասկանալի , սակայն փայլուն և փքուն երեւոյթ ունեցող նախազատութիւններով շլացնել ժողովուրդը և նրա մտքի թոփփքը քարայնել հակասական և անկարելի ու անիրագործելի խոստումների վրայ :

Այո , պիտի խոստովանիլ , որ « դրամագլուխը , աշխատութիւնը և տաղանդը » պիտի կարողանան կամաւոր ընկերակցութեւն կազմել » , բայց ոչ Ս . Ռ . ամկ . գծած շաւղով , այլ այն ժամանակ միայն , երբ դրամագլուխը կը գտնայ ազգային և նա կը կորցնի իր շահագործումի և առեւտրի ձեւը , և միացած համայնական աշխատանքի ու տաղանդի հետ , կը ծառայեն միայն և միայն հանրային կարիքները լեցնելուն : Այո՛ , այն ժամանակ միայն ակնարկւած « կամաւոր ընկերակցութիւնը » կը գոյանայ , և այն օրն էլ իրականացած կը լինի ընկերվարութեան գերագոյն նպատակը , որովհետեւ այլեւս վերացած կը լինի Ս . Ռ . պաշտած « մասնաւոր սեփականատիրութեան » գարշ օրէնքը և մարդկային ընկերութիւնը խազատելով անտեսական կապանքներից կ'ազդի որպէս ազատ աշխատանքի ազատ զուակը , և կը ձեռակերտէ հանրամարդկային ազատ ու հաւասար կեանքի հրաշալի շէնքը :

Սրանից դուրս , մենք հաւատացած ենք որ Ս . Ռ . նաև կ'նարկած « դրամագլուխի , աշխատութեան և տաղանդի կամաւոր ընկերակցութիւնը » ուրիշ ոչինչ է , եթէ ոչ մի Ս.մե.րիկեան հսկայ թրստներին նմանող մի բան , որի մէջ շահագործող և քամողը պիտի մնայ ընդմիշտ դրամագլուխը , կապիտալը ,

Այդտեղ է որ ընկերվարութիւնը երեւան է հանում բուն դիմադրութիւն :

Որքան որ ուշադրութեամբ նետուում ենք Հ. Սահմանադրական Ռամկալարութեան աշխարհահայեացքին և նրա ծրագրի էական կէտերին, մենք այնտեղ հանդիպում ենք աւելի խոշոր հակասութիւնների և անիրագործելի ձգտումների: Օրինակ, այնտեղ շեշտուած է այն հակայական միտքը, որ «կուսակցութիւնն ներշնչուած 20րդ դարու լուսաւոր գաղափարներէն, իր քաղաքական դաւանանքին իրը հիմ և իր գործունէութեան իրը գլխաւոր նպատակակէտ կ'ընդունի, ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ԳԵՐԻՇ ԽԱՆՈՒԹԻՒՆԸ, «ԿՍՈՍՎՍՐՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ Է» . — Ահա նշանաբանը ամեն ուսմկալարական երկիրներու, նոյնը պարտի ըլլալ և օսմանեան պետութեանը:»

Արդարեւ 20րդ դարու լուսաւոր ժաքերը եկել են այն եզրակացութեան, որ «ԿՍՈՍՎՍՐՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ Է», և այդ ջուխտակ շողշողուն խօսքերը գրեթէ բոլոր քաղաքական կուսակցութիւնների գործունէութեան նպատակակէտը և նրանց բերնի ծամոցն է եղել, «ակաջն իրականութեան մէջ և ոչ մէկը նրանցից այդ խօսքերը չի միացրել իր գործի հետ, այնպէս որ ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ իր հիմունքներովը միացել է մշայն ընկերվարական ուսմկալարութեան որպէս սեվականութիւն, որի իրագործմանը նա ձեռնառած և աշխատում է անդադար: Մէկ խօսքով, Ընկերվարական Ռամկալարութիւնն (Սօցիալ-Դէմոկրատ) է, որ պիտի իրականացնէ իսկական ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ և ոչ թէ Սահմ. Ռամկալարութիւնը:

Բայտարենք մեր միտքը:

Մենք գիտենք որ ժողովրդապետութիւնը երեւան կգայ իրականանայ այն ժամանակ միայն, երբ ժողովուրդի ընային կազմը և նրա արտաքին ու ներքին յարաբերու-

թիւնները դասաւորելու և կառավարելու կոչուած պետական մարմինը կը կազմել ամէն մի չափահաս անհասի ուղղակի կամքով, որոշմամբ և հակողութեամբը, որոնք կ'արտայայտւին Քիչի ձևով: Այս այսպէս լինելուց յետոյ տեսնենք թէ Հ. Ս. Ռ. ը ապլիս է մեզ այդ ժողովրդապետութեան բարձր իրաւունքը, քեկի կատարեալ իրաւունքը:

Ահա թէ ինչ ենք կարգում այդ մասին նրա ծրագրի էջ 17ի մէջ, «21 տարին լրացուցած և քաղաքական իրաւունքներէ չի զրկուած ամէն օսմանցի ԱՅՐ (ուշադրութիւն) ընտրող է իր բնակավայրի մէջ, և այլն...»

Ինչպէս տեսնում ենք «ԿՍՈՍՎՍՐՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ Է» յայտարարող Հ. Ս. Ռ. ը այդ ժողովուրդի կառավարութեան ձևակերպութեան իրաւունքը տալիս է բացառապէս «21 տարին լրացուցած ԱՅՐ» մարդին, միւս կողմում թողնելով նոյն ժողովուրդի գրեթէ կէս մասը կազմող իգական սեռը, որի վրայ Ս. Ռ. ը նայում է որպէս անպէտք և անօգուտ ու նոյն իսկ ընկերային կեանքի մէջ իրաւազուրկ մի տարր: Այս դէպքում ինչպէս կարելի է ասել թէ «կառավարութիւնը ժողովուրդն է»:

Հայ կեանքի մէջ գործադրութեան շաւիղի վրայ բերած սոյն միջնադարեան հին ու հակաբնական օրէնքը, մարդկային զանգուածի կէս մասի (կիսջ) իրաւազրկութիւնը՝ հասարակական գործերէ մէջ խանուելու համար Ս. Ռ. ն կողմից նորութիւն չէ, այլ նրա ընդհանուր հայեացքն է, որով նա զեկալարում է նոյն իսկ լուսամիտ ներսպայի և ազատ կոչուած Ամերիկայի մէջ, մը բան որ երեւան է բերում այդ հոսանքի, այդ կուսակցութեան ձգտումների հակասութիւնը և հակաբնական լինելը:

Այո՛, Հ. Ս. Ռ. ը հրապարակու յայտարարում է թէ՛ «կառավարութիւնը ժողովուրդն է», բայց միւս կողմից նա ինքն է, որ հէնց այդ ժողովուրդի մեծ մասը զրկում է իր բուհովը մասնակցելու իր իսկ գործերին, պետական կազմի ընտրութեանը և իր ձակատագրի որոշմանը:

Այլքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ինդուստրիական, արդիւնաբերութեան և ընդհանրապէս տնտեսական բոլոր ճիւղերի մէջ կիրնը ևս այր մարդու հետ կողք կողքի կանգնած իր մտաւոր և ֆիզիքական ուժերովը աշխատում է հանրային կեանքի շինութեան մեծ գործի համար, և թէ ՆԱ. էլ ԱՅԲ մարդու պէս ասանակ միլիոններով գործարանների, խանութների և ատճաարակ վաճառականական բոլոր ճիւղերի մէջ կատարում է ֆակտորի և աշխատութեան նոյն գործը և վերջապէս, որպէս բաղդակից ընչազուրկ այր ընկերոջ, նա էլ այսօր ենթարկւած է ներկայ անարդար հասարակարգերին, մենք չենք հաւատում և նոյն իսկ անկարելի ենք համարում նրան բռնադատել, որ նա, կիրն՝ իր բերանը փակէ, իր միտքը խցէ և իր մարդկային բաղձանքները քարացնէ, որպէս զի մի ուրիշը, այր մարդը դայ և իր տիրապետող քւէովը, իր իշխանական ձայնովը որոշէ կնոջ ձակատագրը և կենաց ու գոյութեան հարցը: Այդպիսի անիրաւ և հակաբնական կարգադրութիւն որի յաւերժացմանը ձգտում է Սահմանադրական Ռամկավարութիւնը, մենք դատապարտելով դատապարտում ենք, որովհետեւ բացի այն, որ նրա մէջ չկայ ժողովրդապետութեան որեւէ նշոյլ, նաև քալիս է յաւերժացնելու մարդկային ընկերութեան կէս մասի՝ կնոջ գերութիւնը այր մարդու առաջ, մէկ խօսքով նրա կամադրութիւնը և իրաւադրութիւնը: Մի բան որ նշանակում է ընտանիքի, հասարակութեան և նոյն իսկ համայն մարդկութեան մէջ ստեղծել մէկ դասակարգի իշխանութիւնը և տիրապետութիւնը միւս դասակարգի վրայ: Եւ այս անարդարութեան դիմադրում է Ընկերվարական Ռամկավարութիւնը (Ս. Գ. Հ. Կուսակցութիւնը) իր հետեւեալ որոշումովը:

«Գ. — Թէ՛ օրէնսդիր ժողովի և թէ՛ նահանգներու, գաւառներու և համայնքներու ինքնավարութեանց համար ներկայացուցիչներ ընտրելու, ինչպէս նաև ընտրելու իրաւունք ունի ամէն քսանամեայ քաղաքացի առանց խտուրթեան ազգի ցեղի, դասակարգի, կրօնի և Սեռի»:

Այո՛, իսկական ժողովրդապետութիւնն ա՛յն ժամանակ միայն երեւան կգայ, երբ ժողովուրդը կազմող ամէն մի անհատ իրաւունք կո՛ւնենայ իր ձայնովը, կամքովը, հասկացողութեամբ ու դաստիարակութեամբը մասնակցելու այդ պետութեան կազմակերպութեան և կազմին: Հակառակ պարագային եղածը ժողովրդապետութիւն չպիտի նկատուի՝ «այլ պարզապէս առանձնաշնորհուած այր մարդի գերիշխանութիւնը իր հակառակ սեռի վրայ: Ուրեմն էլ, ո՛ւր մնաց «կատավարութիւնը ժողովուրդն է» չողջողուն և միամիտ ժողովուրդը չլացնող խօսքերը: Աւելի քան 100 տարի Ս. Ռ. ը նոյն բանը կրկնեց Եւրոպայի և Ամերիկայի մէջ, սակայն և հէզ ժողովուրդը բնաւ չտեսաւ այդ խոստացած «ժողովրդապետութիւնը» և տեսնելիք էլ չունի մինչև յաւիտեան. եթէ չի խորտակւիր Սահմանադրական Ռամկավարութեան չափաւոր և ինքնասէր ձեռքերով կանանց հանդէպ դրւած քւէի և ձայնի իրաւադրութեան այդ հոկայ պատնէշը:

Քալլ առ քալլ և կէտ առ կէտ հետեւելով Ս. Ռ. ն և մասնաւորապէս Հ. Ս. Ռ. Կ. ն աշխարհայեացքին, նրանց ձգտումներին ու գծած գործելակերպի դիտաւոր գծերին, մենք այդ կուսակցութեան մէջ չգտանք քաղաքական մի այնպիսի առողջ միտք և ձգտում, որ կարողանար համապատասխանել ժողովուրդի և ժողովուրդների նորագոյն պահանջներին և ձգտումներին, որովհետեւ այդ կուսակցութիւնը որ արտայայտութիւնն է տնտեսական տիրապետութեանը՝ դատակորգրի մէջ, չնայած իր մէկ ու կէս դարու կեանքին, բայց և այնպէս շնորհիւ իր մտքերի կղզիացմանը, միշտ մնացել է իր նախնական անզարգացած վիճակի մէջ և չի կարողացել իւրայնել իսկական ժողովուրդի իղձն ու բաղձանքը, նրա ընդհանուր պահանջն ու ցաւը, որովհետեւ դրանք հակառակ էին ու հակառակ են իր դասակարգի շահերին: Ըստ որում այդ կուսակցութիւնը, ըստ մեզ, քաղաքական աշխարհի մէջ կը մնայ իր ներկայ քարացած վիճակի

մէջ, մինչեւ ընկերվարական հօր ձեռքը նրան կը խլէ ընկերային կեանքի միջից և իսկական ժողովրդագիտութիւնը կ'ազատել այդ արտակարգ բեռի և արգելքի ծանրութիւնից :

Եւ պիտի ասել, որ հէնց այդ մտահոգութեամբ է, որ Հ. Ս. Ռ. Կ. Ն իր համար հաստատել է մի երկրորդ կայան և ապաստանարան, որ նահանջի պարագայում կարողանայ ըստ կարելոյն դիմադրել ընկերային առաջադէմ մտքերին և այդ մտքերից առաջացած Հանրամարդկային ազատագրութեան զօրաւոր հոսանքներին, այդ է՝ ազգայնականութիւնը :

Այս մասին խօսքը տանք Հ. Ս. Ռ. Կ. Ն :

« Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւնը ձգտելով առնել Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Կ. Ս. Ռ. Կ. Ն կուսակցութեան մը նկարագիրը և հանդիսանալ հայ ժողովուրդի ազգային քաղաքականութեան արձայնիչը, են... » :

Ասել է թէ՛ Հ. Ս. Ռ. Կ. Ն ձգտում և ջանք է անում միայն Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Կ. Ս. Ռ. Կ. Ն քաղաքականութեան արձայնիչը դառնալ թիւրքիայի մէջ, հետեւաբար և ընդհանուր քաղաքական աշխարհի մէջ կատարելիք նրա դերը երկրորդական տեղ է բռնում և նոյն իսկ աւելորդ մի բան է նկատուում. Այս տեղ մենք համաձայն ենք Հ. Ս. Ռ. Կ. Ն հետ, և յայտարարում թէ՛ նա իսկապէս ազգային մի կուսակցութիւն է, հետեւաբար և նրա ամբողջ գործունէութիւնը կեդրոնանում է զուտ ազգային գործերի, նրա հաստատութիւնների, եկեղեցիների և այլն ներքին շահերի և ինդիւրների մէջ : Այս այսպէս լինելուց յետոյ, մենք բոլորովին աւելորդ ենք համարում յանուն ընդհանուր մարդկութեան և համաշխարհային վերաշինութեան գործին՝ նրա արած մեծ-մեծ յայտարարութիւնները :

Ազգային գոյութեան պահպանումը ևս չպիտի հաւատալ որ Հ. Ս. Ռ. Կ. Ն առանձնաշնորհումն է, ո՛չ, այդ կարեւոր և նոյն իսկ հրամայական պահանջի համար իր ծրագրի և գործունէութեան մէջ որոշ տեղ է յատկացրել Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնն ևս :

Ահա թէ ի՛նչ է ասում նա :

« Ազգային ինդիւրներու նկատմամբ պաշտպանել ազգութիւններու քաղաքական իրաւունքները : Ժխտել մէկ ազգի ստորագասումը միւսին : Ազգութիւնները որպէս պատմական անհատականութիւններ ազատօրէն զարգանալու, յառաջդիմելու ամէն պայմաններ պիտի ունենան առանց որեէ սեղմումի մէկի կամ միւսի կողմէն :

« Սօսիալական (ընկերային), տնտեսական, քաղաքական ո՛չ մէկ խոչնդոտ պիտի ըլլայ ազգութեան մը անկաշկանդ յառաջդիմութեան և բարգաւաճման առջեւ, այնպէս որ ազգութիւններու բացարձակ հաւասարութիւնը եւ ինքնորոշման սկզբունքը անձեռնմխելի եւ անժխտելի իրաւունք կը հանդիսանայ :

Ինչպէս տեսնում ենք, ընկերվարութիւնը իր լայն և աշխարհայէն հայեացքները մէջ կարեւոր տեղ է տալիս նաև ազգերի, նոյնպէս և հայ ազգի պատմա-անհատական անկախ գոյութեան պահպանումի հրամայական պահանջին և հէնց այդ սեղմութեամբ էլ նա գործում է թիւրքիայի մէջ, որովհետեւ նա հաւատում է, որ առանց ազգի անհատական գոյութեան պահպանումին, այսօր անկարելի է ունենալ միջազգային միաձոյլ ա՛յն սեփ, ա՛յն յեղաշրջիչ գորութիւնը, որ կողմած է վերջնականապէս տապալելու արգի անարդար հասարակակարգերը, լինին նրանք միապետական թէ սահմանադրական երկիրներում կամ ազգերի մէջ :

Քննութեան և համեմատութեան առնելով Ս. Դ. Հընչակեան Կուսակցութեան և Հ. Ս. Ռ. Կ. Ն ծրագրերի ու նրանց աշխարհաշայեացքների գլխաւոր և կարեւորագոյն կէտերը, մենք կարծում ենք որ ժամանակն է այժմ մէկ կողմ թողնել երկրորդական վիճելի հարցերը և պատշաճութեամբ խօսքը տայ հակառակորդին, որպէս զի նա էլ հրապարակ դնէ իր սանձիքները որից յետոյ թերեւս մենք նորէն վերադառնանք այս լուսարանութիւններին : Հետեւաբար մենք այս տեղ կանգ կ'առնենք և կ'սպասենք լսելու հակառակ կարծիքը :

# ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

Ե Ի

## ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ա .

Հրապարակային ու լսարանական ժողովների մէջ ինձ և զամ մի շարք հարցումներից և թեր ու դէմ բացատրութիւններից ես ա՛յն եզրակացութեանն եմ եկել, որ չորհիւ մեր հակառակորդների տարածած միտումնաւոր չարախօսութիւնների, առաւել ևս ընկերավարական խակ և անաս գործիչների և պրօպագանդիստների տուած զանազան հակասական ու անգոհացուցիչ բացատրութիւնների, բռնազրաւումների, մանաւանդ հողերի համայնականացումի մասին ժողովուրդի մէջ տիրում է տարօրինակ արտառոց մի հասկացողութիւն և համոզում, որ չէ թէ միայն հակաընկերավարական, այլ նոյն իսկ հակաբարբարոսական կարելի է համարել :

Օրինակ, խիստ ամիոփ կերպով ասած, ժողովուրդը հաւատում է, որ ընկերավարութիւնը ազգային բոլոր հարստութիւնների հետ միասին բոլոր հողերն արդի «օրինական» ակերից բռնի ուժով խլելով պիտի բաժանէ ժողովուրդի մէջ . . . մի բան՝ որի մասին ընկերավարութիւնը երազել անգամ չէր կարող :

Այս վտանգաւոր թիւրիմացութեան և վշտակար տարածայնութեան առաջն առնելու համար պարտաւորւած ենք վեր առնել հողային հարցը, որ գրեթէ բռնազրաւումների

հիմնական մի կէտն է և ըստ կարի ամիոփ կերպով լուսաբանել նրա համայնականացումի ձեւը, միջոցները և բուն նրպատակը :

Ճիշտ է որ «բռնազրաւումն» իր բառացի նշանակութիւնով չառ վատ է նշում խաղաղասէր ականջներին և նոյնչափ էլ գէշ ասպարեութիւն է թողնում առ հասարակ նրանց վրայ որոնք հակառակ են բռնի ուժի գործածութեան, ինչպէս օրինակ, Ռամկավար Ընկերավարութիւն կամ Սօցիալ Դէմօկրատիան : Բայց չպիտի մոռանալ որ այդ բառն ունի իր պատմական արմատը, որի համար մեղադրուողը չէ թէ ընկերավարութիւնն է . այլ ա՛յն շահագործող տարրը, ա՛յն աւազակ ազնուականութիւնը և աւատականութիւնը որ դարերի ընթացքում, իր ֆիզիքական բիրա ուժովը և բռնի կերպով հողը խլելով ժողովուրդի ձեռքից, հիմքը գրեց բռնազրաւումի սիստէմին, որի արմատները հանելու և ժարկկայլն ընկերութեան նրա հասցրած անթիւ չարիքների առաջն առնելու համար, թշուառ հողազուրկների ծոցից ծնած ընկերավարութիւնը իր ամբողջ թափովն այսօր աշխատում է հակառակ կողմը դարձնել դեռ շարունակուող և սիստէմաթիք կերպով առաջացող այդ բռնազրաւումի ընթացքը, սակայն այս անանգամ ի նպաստ զրկուածներին, անիրաւուածներին, մէկ խօսքով ընդհանուրի, միայն այն տարբերութեամբ, որ ցարդ եղած բռնազրաւումը կատարուել է արեան ու արհաւիրքի մէջ, ի նպաստ մի որոշ դասակարգի, իսկ այսուհետեւ նա իր յետադարձ ընթացքը պիտի կատարէ խաղաղ և օրինական միջոցներով և բնաշրջման անդիմադրելի օրինաց ճանապարհով, այս անգամ ի նպաստ ընդհանուրի և հանրութեան :

Հետեւաբար մենք չպիտի ընդունենք արդի բռնազրաւումը ա՛յն մտքով, ինչ մտքով որ մօտենում ենք աւատականութեան կատարած բռնազրաւումին, որով և ոչ մի անհանգստութիւն պիտի զգանք այդ բառի հնչումից, քանի որ ընկերավարութեան ընդունած արդի բռնազրաւումի

չպիտի լինի ոչ բռնի ուժի, ո՛չ արեան և արձաւիրքի և ոչ էլ անիրաւութեան ու զրկումի որեւէ հետք :

Մենք գիտենք, որ մարդկային բնկերութիւնը իր առաջին, ասենք բարբարոսական, շրջանը անցնելուց յետոյ, երբ կեանքի կարիքները և շրջապատող պայմանների առաջնորդութեամբ գտաւ, որ հողի մէջ ծածկուած բնութեան աճազին բարիքներից կարելի է օգտուելով համեմատաբար աւելի խաղաղ և հանգստ կեանք վարել, այն ժամանակ նա փակեց այդ հողին և որպէս ապրուստի ամենալլխաւոր միջոցը՝ սկսեց մշակել և արդիւնաբերել նրան, պարզապէս ուճել, ապրել եւ բնակւելու համար, և ոչ թէ շահագործելու, ասենք վաճառելու կամ շահի տեսակէտով փոխանակելու համար, քանի որ այդ գործողութեան մասին այն ժամանակուան մարդիկ ո՛չ պէտքը ունէին և ոչ էլ կարող էին մտածել :

Ընդարձակ հողերի վրայ ցիր ու ցան կղած փոքրիկ ցեղերը, գերգատտաններ և ընտանիքները սկսեցին ամէն մէկն իր պատահած տեղում առանց սեփականատիրութեան և դրացիական սահմանագծային սահմանումների տեղն ու տեղը հաստատուել հողի վրայ հաւաքաբար, մշակել նրան հաւաքաբար և վայելել այդ հողի արդիւնքը հաւաքաբար և առանց «իմ ու քո»յի : Այնպէս որ հողի մշակութեան նախօրեակում ժամանակակից կեանքի հետ պայմանաւորուած հանդամանքների շնորհիւ մարդկութեան մէջ տիրում էր համայնականութիւնն իր նահապետական պարզ ձեւերովը, որով համայնական հողի վրայ հաւաքական աշխատութիւնը երեւան էր բերում արդիւնաբերութիւնը և այդ արդիւնքը սպառւում էր նոյն հացաքական արդիւնաբերողների կողմից հաւասարապէս առանց «իմ ու քո»յի և չտի ու սահմանի խտրութեան :

Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ շրջապատող պայմանների թոյլ չպիտի տային : Այսպէս հողը անցաւ մարդկային ցեղի ձեռքը, որպէս սեփականութիւն ընդհանուրի և համայնքի առանց խտրութեան :

Սակայն մարդկային ցեղի աճումով և զարգանալով փոխուեց նաև նրա ապրուստի պայմանների ձեւերը և պահանջները : Նա սկսեց դաղթել և տեղափոխուել մէկ տեղից միւսը և իր բնակութեան և ապրուստի համար կատարել հողային նորանոր բնորութիւններ, որով զանազան համարմբուումների միջև տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ և յափշտակութիւններ : Այս գործողութիւնների հետ երեւան եկաւ սեփականութեան հարցը, սակայն դեռ հաւաքական սկզբունքով : ասել է, եթէ մարդկային մի խմբակցութիւն երբ իր ապրուստի և գոյութեան պահպանումի համար յարմար երեւցած հողամասը կամ աշխարհամասը յափշտակում էր մի այլ հատախմբումից, այդ յափշտակուած կամ գրաւուած հողը սեփականութիւնը չէր դառնում մէկ հողու, կամ առանձնաշնորհուած անհատի, այլ յարձակող և յափշտակող նորհաստատաններից ամէն մէկին, այնպէս որ այդ հողը պիտի մշակուէր հաւաքաբար և սպառուէր հաւաքաբար : Ասել է թէ դեռ հողը մնում էր որպէս սեփականութիւն ընդհանրութեան և համայնքի նոյր իսկ այդ յափշտակումի շրջանում :

Իրերի այս վիճակում երեւան եկան թէև անբնական և անարբար, սակայն մարդկային վատ բնագոյներից մղուած մի քանի անխուտախելի պայմաններ, որոնք եկան խախտելու հասարակական բոլոր հարստութիւնների հետ նաև հողային համայնականութեան բոլոր պայմանները և այդպէսով հողը ազգի, ժողովուրդի, մէկ խօսքով, ընդհանուր ձեռքից խլելով դարձեւ որոշ մարդկանց, աննշան տարրի սեփականութիւնը : Այդ պայմաններն էին, Ա. — Գերեվաճառութիւնը, Բ. — Զինուորական, կուուող դասակարգի բաժանումը արդիւնաբերող դասակարգից և առաջինի առանձնաշնորուիլը և Գ. — Արդիւնաբերութեան փոխանակութիւնը :

Գոյութեան կուսի շուրջը պատող մարդկային ընկերութիւնք երբ այնքան աճեց և բազմացաւ, որ նա հարկադրեց անհատական նեղ ու սահմանափակ վիճակից դուրս՝ մտածել խմբակցական ու համայնական ապրուստի մասին, այն ժամանակ նա իր կեանքի նորանոր պահանջներին գոհացում տալու համար և եղանակի ու բնութեան խտտութիւններից խուսափելով այդ եղանակի և կլիմայի յարմարագոյն տեղերով իր հանգիստը ապահովելու համար մտածեց իր թափառական շրջանակատարութեան մէջ բնակելու, հաստատելու և ապրելու համար հողի ընտրութիւններ անել, որովհետեւ թէ՛ ինքը բնակելու և գլուխն հանգստացնելու տեղի պէտքն ունէր և թէ իր անասունները, արջառները և հօտերը՝ արածելու :

Այս այսպէս լինելով, բնական էր որ կլիմայի առաջնորդութեամբ և թեւադրութեամբը զանազան ուղղութեամբ քլշւող և թափառող մարդկային խմբակցութիւնները, իրենց նպատակին հասնելու համար յաճախ միմեանց հանդիպելով տեղի և հողի ընտրութեան և նոյն իսկ միմեանց ձեռքից յափշտակելու համար ստէպ ունենային արնահեղ ընդհարումներ, մի բան՝ որի անմիջական և հրամայական պահանջը ամբողջ խմբակցութիւններ, մարդկային հատուածներ և ի վերջոյ ցեղերը դարձրեց կուռղ ու պատերազմող տարրեր, որոնք առանց բացառութեան, զինւած ժամանակակից զէնքերով՝ դարձան զինուորական մի մի շարժական և թափառող բանակներ, որոնք Արեւելքից, Ասիայից հնագին հասանքով խուժելով զէպ Արեւմուտք արիւնի և արհաւիրքի, կռիւի և պատերազմի տարափնների մէջ սկսեցին փնտռել իրենց անկալարած հանգստութեան տեղը, աւետեաց երկիրը, մէկ խօսքով ա՛յն հողը ուր պիտի հաստատուէին ընդմիշտ :

Իրերի այս վիճակը և մշտական զինւած ընդհարումները

զանազան ցեղերի և համախմբումների մէջ ստեղծեց երկիրը, հողը մշակող և արդիւնաբերող մի ուրիշ տարրի պահանջը, որի պարտականութիւնը պիտի լինէր բնակելու հողերի նաւաճումներով ու յափշտակումով զբաղւող կուռղի, զինուորի համար պատրաստել ապրուստի և հանգստութեան յարմարութիւններ և հողի ու հօտերի արդիւնաբերութեամբը ապահովել նրա ապրուստը, գոյութիւնը : Եւ այս նպատակի համար ամէն ցեղ պարտաւոր էր աչք դարձնել դուրսի շրջաններին, որովհետեւ իր ուժերից լաւագոյնները պէտք էին զէնքի տակ մնալ կուելու և յափշտակելու համար, իսկ այդ ուժերից դուրս մնացածներն արդէն անպէտք ու անբաւարար էին այդ պէտքը լեցնելու համար, որով կուռղ ցեղերից ամէն մէկի գլխաւոր հօգսը եղաւ որեւէ ձեւով ստեղծել հողերը և ստացուածքները հսկող ու արդիւնաբերող մի որոշ տարր և այդ բանի համար այդ ցեղերը շատ էլ դժւարութիւն չունեցան որովհետեւ ամէն մի նուաճումից յետոյ, յաղթող կողմը նրաւաճած և յաղթուած կողմին զինաթափ անելով կամ իր իսկ հողի վրայ թողնում էր այդ հողը ի նաչիւ յաղթողի մշակելու և արդիւնաբերելու որպէս իրաւագուրկ մի Գոչ-զինուորական և կամ հնագին բաղմութիւնով քշւում և հաստատուած էին նաւաճող և յաղթող կողմի սեփական հողի վրայ, որպէս գերի, իրաւագուրկ ստրուկ, որի կեանքը նաւաճողի սուրբ խնայելով, նրան շնորհել էլ ապրելու իրաւունքը, և այդ բարձր շնորհի զիմաց նա, ստրուկը պարտաւոր էր աշխատել այդ չարքայ աշխատանքի արդիւնքովը մատակարարել իր զինւած տիրոջ, իր կեանքը խնայող բնաւորի ապրուստը :

Այսպէսով երեւան եկաւ Գերեվարութիւնը և ոչ թէ «Գերեվաճառութիւնը», ինչպէս սպագրական անհոգութեամբ այդ բառը սպրդել էր մեր նախկին յօդածի մէջ, և այս անարդար ու անբնական երեւոյթով ընդհանուր մարդկութիւնը բաժանեց երկու որոշ տարրերի և դասակարգերի, մէկը՝ գերին, հողագուրկ և իրաւագուրկ աշխատողը, որի պարտա-

կանութիւնն էր չարքաշ աշխատանքով հայթայթել իր տիրոջ, աղայի և բռնաւոր նւաճողի առօրեայ ապրուստը . իսկ միւսը նւաճող զինւորականութիւնը, շահագործող ու բռնացող տարրը, որը կռթնած իր ամենազօր սուրին՝ իր արդար իրաւունքն էր համարում իր նւաճած, յափշտակած, մէկ խօսքով բռնագրաւած հողերը նոյն հողերի նախկին, սակայն այժմ իրաւագուրկ տէրերի ձեռքով մշակելով վայելել նրա արդիւնքը, առանց այդ արդիւնաբերութեան քրտնատանջ աշխատութեան մէջ իր մտտը սաք ջուրից պաղը զարկելու : Զէ՞ որ նա իր բաժինը սուրի ուժով էր դնում համայնական սեղանի վրայ . . . :

Ահա այս անիրաւ ու անարդար պայմանների տակ, մարդկային ցեղը, նրա ընդհանուր զանգւածը բացի ա՛յն որ բաժանւեց երկու հակադիր և հակառակ դասակարգերի, նաև սուրի բռնութեամբ երեւան եկաւ մի նոր և աւելի զղւելի ու անարդար երեւոյթ, այն որ, այդ դասակարգերից մէկի, աշխատողի և արդիւնաբերողի կատարեալ իրաւագրկումը, որով նա բռնագրաւած էր իր ձեռքից յափշտակած հողը վրայ աշխատելու առանց այդ աշխատութեան արդիւնքը վայելելու իրաւունքով, իսկ զինւորականի, յափշտակող բռնագրաւողի առանձնաճեղճումը, որով նա իր իրաւունքն էր համարում զեղիս, ծոյլ ու փարթամ կեանք վարելու համար վայելել հակառակ դասակարգի դառն աշխատութեան արդիւնքը, առանց խղճի ամենաթեթեւ մի խայթ զգալու :

Եւ հողային բռնագրաւումի նախնական շրջանի երեւան գրած այդ անհաւասարութիւնը, համայնական կեանքի խախտում և շեշտաւորումը և այդ առթիւ իսկ դասակարգերի ծնունդ ստանալն ու այդ դասակարգերի մէկի իրաւագրկում և միւսի առանձնաճեղճիլը իշխող և յափշտակող զինւորական դասակարգին բերեց այն համոզմանը, որ ինքը մի ինչ որ երկնային ու գերբնական կարգադրութեամբ ծնւել է աւելի նպատատւոր և լաւ պայմանների մէջ քան իշխող և ի-

րաւագուրկ դասը, և թէ ինքը երկնային անհասանելի բարձրութիւնից առանձնաշնորհւած է ապրելու և վայելելու առանց աշխատելու, հեռււարար և իր ապրելու պայմանները թելադրում և ներշնչում են Աստուածների կողմից, որին խառնելու և մօտենալու իրաւունքը չունէ իրաւագուրկ, ստրուկ դասը : Այսպէս և այս համոզմամբ զինւորական իշխոյ դասը իր և իր հակառակ դասակարգի դիրքը վերջնականապէս որոշեց երբ նա իր ծնունդ ու գոյութեան արմատը գտաւ ազնւականութեան մէջ և ինքզինքը հռչակեց չայտատու, սակայն վայելող ազնւական, իսկ հակառակը՝ իբրև աշխատող և արտադրող, սակայն չի վայելող գերի :

Այսպէս, հաւասար իրաւունքներով ծնւած և համայնական ընդհանուր սեղանի շուրջը բոլորած մարդկութիւնը տասնեակ դարերի գոյութեան պայքարը ընթացքում իր կեանքի և ապրուստի տնտեսական պահանջներին գոհացում տալու համար շեղւելով բնութեան գծած օրինաւոր ճանապարհից, ծնունդ աւելց իրերակարգերը այնպիսի մի անարդար վիճակի, որի անմիջական ու անխուսափելի հետևանքը պիտի լինէր և կտաւ, առանձնաշնորհւած ազնւականութեան երեւան գալը, որը իր ափի մէջ հաւաքելով ժողովուրդի տկար մասից բըռնութեամբ գրաւած, կամ ասենք բռնագրաւած հողերը, ապօրինի ու անիրաւ կերպով շահագործել սկսեց նոյն այդ հողերի նախկին տէրերի, իսկ այժմ իրաւագուրկ գերիների կամ ճորտերի ձեռքով :

Ասել է թէ հողերի բռնագրաւումը հին օրերից սկսւեց և գործադրւեց ժողովուրդի զմւււած և ասենք զօրաւոր մի մասի կողմից, որը ժամանակի ընթացքում ազնւանալով եւ առանձնաճեղճելով չէ թէ միայն բաւականաչափ իր կատարած նախկին անիրաւութիւններով, այլ նա ջանաց այդ անիրաւութիւնները օրինական հողի վրայ դնելով ու «երկնային» օրէնքներով յաւերժացնելով հողերի բռնագրաւումը և նրա կեղբոնացումը յետագայում կատարել, նւիրագործել ինչ գնով էլ լինի այդ, որի պարզ օրինակը տալիս է մեզ Փէօդալական գրութիւնը և նրա կատարած բռնագրաւումները :

Այսպէս, երբ սուրի և բիրտ ուժի գորութեամբ մարդկութեան առանձնաշնորհուած մի չնչին մասը, զլնուած ազնուականութիւնը, հողը բռնագրաւեց և յախշտակեց համայնքի ձեռքից, նա մտածեց նաև այդ հողի արդիւնաբերութիւնը կեդրոնացնելու և աշխատող դասակարգի սպառման մի նիւմում բաժինը հանելուց յետոյ, նրա աւելցածը սեփականութեանը յատկացնել իր զեղիս կեանքի շուայ պէտքերին և կամ նոյն աշխատող ու արտադրող դասակարգին ընդմիջտ նուաճուած ու գերի վիճակում պահելու համար: Եւ այս պահանջը առաջացրեց ֆէոդալական հողաբաժանումի և այդ հողերի արդիւնաբերումի հսկողութեան ձեւը, ուր բարոններ, զուքսեր, լորդեր և այլն գործի գլուխ անցնելով, ամէն մէկն իր աստիճանի և իրաւատութեան համապատասխան հողամասերի և այդ հողերի վրայ հաստատուած իրաւագութիւն աշխատողներին տիրանալով սկսեցին բացարձակօրէն քամել ժողովուրդը:

Երբ այս ձեւով բռնագրաւուած հողերի արդիւնաբերութիւնը ևս դարձաւ առանձնաշնորհուած դասի սեփականութիւնը, այն ժամանակ երեւան եկաւ այդ արդիւնաբերութեան աւելցած մասի, լորդին կամ զուքսին բաժին մնացած սեփականութեան, փոխանակութեան անհրաժեշտ պահանջը, քանի որ այդ աւելցած արդնաբերութիւնը, հում նիւթն իր նախնական վիճակում ընդ միջտ մթերել և կամ պահել աշխատելը լորդի համար փտտեցնել և փճացնել էր նշանակում. հետևաբար այդ հարցը միանալով ժամանակակից կեանքի հետզհետէ բարդացող պահանջներին՝ հաստատեց միջժողովրդեան և կամ ասենք, միջազգային փոխանակութեան ձեւը, որով ամէն մէկ կողմն իր պէտքից և սպառման չափից աւելցած ապրանքը կամ նիւթը իր մերձակոր դրացի ցեղի

հետ փոխանակում և նրա փոխարէն առնուած էր այնպիսի նիւթ և կամ ապրանք որը սրկատում էր իր արդիւնաբերական շրջանում և որին ինքը պէտք ունէր կամ իր ապրուստի անմիջական պէտքերը հոգալու, և կամ լորդերի ու ֆէոդալական աստիճանաւորների փարթամ կենցաղավարութեան պահար լեցնելու և նրանց հսկայ դղեակները փառաւորապէս զարգարելու համար:

Եւ այս փոխանակութիւնը, որ ժամանակին ծնունդ էր ստացել միայն ժողովուրդների անմիջական պահանջները լեցնելու համար՝ նրանց գլխին դարձաւ պատուհասներից ամենասարսափելին, երբ այդ գործողութիւնը դարձաւ ՇԱՀի ապահով մի աղբիւր որոշ դասակարգի համար և այդ ՇԱՀԸ բարդելու, դիզելու և ձեռքից չտալու համար երեւան եկաւ ԳՐԱՄԸ և այդ դրամի շուրջը կատարուող սոսկալի մրցումը . . . :

Մենք գիտենք որ հողի և անասունների արդիւնագործութեան հետ զուգընթացաբար առաջանում էր նաև ժամանակակից ինդուստրիան և ճարտարարուեստը, որոնք իրենց զազկեաններով, ձեռքի գործիքներով և շկատարելագործուած արեւսագիտութեամբը կոչուած էին ժողովուրդին տալ ուստելիքից դուրս, նաև նրա կեանքի միւս պէտքերը. ինչպէս հագուստը, ծածկոցը, զէնքերը, սան կահ կարասիք և այդ օրինակ ուրիշ պէտքերը: Եւ այս բոլորի համար հում նիւթ մատակարարելու նպատակաւ երեւան եկաւ վաճառականութիւնը դիւրացնող և չահաւէտ դարձնող ԳՐԱՄԸ:

Արդ, ինչպէս մինչեւ այստեղ տեսանք մարդկային ընկերութիւնը, որ երեւան էր եկել համայնական իրաւունքներով և ապրում էր համայնական հողի վրայ, զրկելով իր հողից՝ նա դարձաւ գերին և իրաւագութիւն աշխատաւորը ա՛յն աննշան դասակարգին, որը հանգամանքների բերմամբ և յենուած իր սուրի և բիրտ ուժի վրայ բռնագրաւել էր հողը, կեդրոնացրել էր նրա արդիւնքը իր ձեռքի մէջ և իբրև «ա-

առնձնաշնորհուած ազնուականութիւն» , նա այդ բոլորը վաճառքի էր հանում ու պէս իր սեփականութիւնը՝ իր անասական շահի համար :

Բայց զեռ չարիքը միայն այսչափով չէր լրանում և ոչ էլ ժողովուրդի գերութեան վերջն էր այդ , այլ դրամի երեւումով և փոխանակութեան նոր ձեւովը , այսինքն ՇԱՀԻ տեսակէտով սկսուած հում և մշակուած նիւթերի առեւտուրը , հողերի լոնադրաւումների և կեդրոնադրման մի նոր դարագլուխ բացելով , յեղաշրջեց նաև ինդուստրիայի և ճարտարարուեստի աշխարհը կեդրոնացնելով հողը , նիւթը , արգիւնաբերութիւն և յարակից համայնական հարստութիւնները («առնձնաշնորհուած դասակարգի») ափի մէջ :

Բռնագրաւուած հողերը արգիւնաբերելու համար , աշխարհիս զանազան մասերի («առնձնաշնորհուած» սեփականատէրերը իրենց տեղական հանգամանքների համաձայն դաստարելով այդ գործը , որոշ տեղերում հողագուրկ տարրը մնաց ընդ միշտ գերի , ծախուած աշխատաւոր և ճորտ բըռնադրաւորի ձեռքում մինչև վերջ : Իսկ ուրիշ տեղերում էլ նա որոշ չափի ազատութեան հետ ունեցաւ նաև իր սեփական վարելահողը և արօտատեղին , սակայն միշտ ի շահ գլխաւոր հողատիրոջ՝ բռնագրաւող յորդի կամ գուքսի :

Սակայն ԺԴ և ԺԵ . դարերի միջև երբ բուրգը և մանիֆակթուրայի այլ նիւթերը շնորհիւ սկսուած փոխանակութեան նոր ձեւի , շահաւէտ վաճառականութեան դարձաւ օրուան հրատապ պահանջը , այդ ժամանակ ոչխարի և արջաուների գոյութեան իրաւունքը հողի վրայ դարձաւ աւելի անհրաժեշտ և նպաստաւոր լսրդի , գուքսի ու հողատէր բարոնի համար քան գիւղացիները և աշխատաւորները , որոնք այդ հողերի վրայ տեղ գրաւելով արդելք սխտի դառնային արօտատեղիների սահմանների ստորածմանը և ոչխարների ու ընդհանրապէս արջաուների շահագործումին :

Չէ՛ որ ոչխարի բուրգը , իւղը , կաշին ևն , կարող էր ծախուել , իսկ մարգինը՝ ոչ :

Եւ այսպէս , այդ ժամանակից սկսուեց մի նոր և սխտէմտութիւք սակայն աւելի ստուկի հալածանք հողատէր լորդերի կողմից հանդէպ հողագուրկներին և մանր հողատէրերին : Եւ այդ հալածանքը այն պարզ նպատակով էր , որ հողի վրայից քչուէին մարդկային բազմութիւնները և նրանց բնակարանները քանդելով հողերը արօտատեղիի վերածել ոչխարների , այծերի , անասունների , արջաուների այնպիսի և այնչափ հօտեր , որոնց բուրգը , իւղը , կային ևն . արտագրութիւնները որպէս հում նիւթ պիտի ծառայէին մեծ հողատիրոջ սկսած վաճառականութեան համար : Այս հալածանք և այս ձեւի բռնագրաւումը իր աղետաբեր հետեւանքով աւելի ևս չեղուեց մանաւանդ ԺԶ . դարում , երբ հոտէական կեղեցու ղէմ սկսուած «Րէֆորմասիօն»ը առիթ եղաւ որ այդ կրօնքի անունով հաստատուած ֆէոդալական կազմի , կաթսլիկ կեղեցու , հզօր Պապերի ահազին քանակութեամբ և անվերջ տարածութեամբ հողերը թագաւիր աւատապետների կողմից բաժանուեցաւ իրենց մերձաւոր և « ֆաւօրի » ազնուականների և աւատականների միջև : Այս վերջինները , ինչպէս վերն ասեցինք , ժողովուրդից և ապա եկեղեցիից յափշտակած հողերը արօտատեղիների վերածելով մեծամեծ շահեր վեր առնելու համար սկսեցին իրենց անթիւ ու անհամար գիւղերն իսկ հիմնայատակելով նրանց բնակիչները գուրս քչել . . . :

Այս էր բռնագրաւուած հողերի վիճակը գրեթէ ամբողջ արեւմտեան ազգութիւնների մէջ մինչև ԺԷ . դարու սկիզբները , մանաւանդ Անգլիայի մէջ :

Միլիոնաւոր ժողովուրդի հողագրկումը և նրանց սրտաքուտումը իրենց հողերի վրայից և անից առաջացրեց ֆէոդալական կազմի քայքայումը նոյն այդ ժողովուրդի ձեռքով , որոնք միացած միջակ հողատէրերի հետ՝ զանազան ըմբօստ

միջոցներով և յեզատիտութիւններով խորտակեցին Ֆէոդալական գերիշխանութիւնը համայն հողի վրայ և նրա տեղ հաստատեցին «ազատ սեփականութիւնը» :

«Ազատ սեփականութիւնը» որ այդ թուականներին Անգլիայի, Ռուսիայի, Եւէգիայի և Եւրոպական բոլոր մասերի մէջ ժամանակակից բուրժուաների և վաճառականների շահորութեան մի նոր ծրագիրն էր, բաւական մեծ յաջողութիւն ունեցաւ, որով շատ տեղեր նոյն իսկ օրէնքներ հաստատուեց, որոնց զօրութեամբ Ֆէոդալական յարաբերութիւն և իրաւունքների թելերը բոլորովին խզուելով կեդրոնականի հետ, նրանց տեղ հաստատուեւ էր գիւղացիների, մանր հողատէրերի և առհասարակ ամբողջ փողովուրդի ուղղակի սուբբը :

Հողային յափշտակումի այս առերևոյթապէս յետադարձ շարժման գլուխն էր անցած ժամանակակից բուրժուազիան՝ հում նիւթերի և այդ նիւթերից առաջացած արդիւնաբերութեան աւելցածը փոխանակելու և շահագործելու տեսչով այրուող գործատէր և վաճառականը, որը խորտակելով Ֆէոդալական իրաւունքները, ինքը պիտի անցներ նրա տեղը, «ազատ սեփականութեան» անուան տակ վերակեդրոնացնելու հողերը և իր գործարանների համար հողագուրկներից պատրաստելու ընչազուրկ, իրաւագուրկ, մերկ ու անօթի գործաւորների աճագին բանակներ, աժան աշխատող ձեռքեր . . . :

Եւ այս բոլորի հետեւանքը եղաւ այն, որ այս յափըշտակումի և բանագրաւումի շարունակական մրցութեան ընթացքում համայնական հողը համայնքի ձեռքից յափշտակուելով դարձաւ մի որոշ գասակարգի սեփականութիւն և հէնց այդ սեփականատէր գասակարգը ևս շեշտաւորուելով երեսան բերեց իր ոտորաբաժանումները, որոնք իրենց մէջ անբնդհատ մրցումով աշխատում են իրականացնել Մեծ Մատէրիպիտա՝ Մարքսի մարգարէացած ՀՈՂԱՅԻՆ ԿԵՊՐՈՆԱՅՈՒՄԸ :

Այսպէս, բազմաթիւ դարերի ընթացքում մարդկային բնկերութեան գոյութեան և ապրուստի, մէկ խօսքով նրա անտեսական և մատէրիպական աշխարհի առանցքը կազմող

հողը՝ սուրի ծայրով յափշտակողների մէջ փոփոխակի շրջաններ կտատրելով այսօր նա գտնուում է խոշոր, միջակ և մանր հողատէրերի ձեռքերի մէջ, որոնց մէջ եղած անհաւատար պաշքարը այժմեանից իսկ երաշխաւորում է խոշոր հողատիրոջ, այժմեան կապիտալիստի յաղթութիւնը և հողերի վերջնական կեդրոնացումը նրա, կապիտալիստի ձեռքերի մէջ, մի բան որ պատմական անհրաժեշտութիւն է և անխուսափելի :

Մինչեւ այստեղ, ընդհանրական կեանքի անտեսական երևոյթները վերլուծումով ապացուցեցինք թէ՛ բռնադրաւումը գոյութիւն է ունեցել և գործադրուել է շատ հին ժամանակներից, անարգարութեան և անիրաւութեան ճնունը՝ այժմեան կապիտալիստի նախահայրերի՝ շինտօրականութեան, ազնուականութեան, Ֆէոդալների, թագաւորների և նոյն իսկ Հռովմէական եկեղեցական կազմի կողմից : Եւ թէ՛ հէնց այդ անիրաւուած, հողագուրկ մասսայի թշուառութեան արգանցից ծնած ընկերվարութիւնն է, որ այսօր գալիս է պահանջելու յափշտակուած հողերի վերադարձը իրենց օրինական տէրերին, զրկուած արդիւնաբերողներին, մէկ խօսքով արդի թշուառ, անօթի, մերկանդամ և իր ֆիզիքական ոյժն ու այդ ուժի բնական պաշարը վաճառքի հանող պրօլետարին, գիւղացուն և մշակին :

•

Մինչեւ այստեղ մենք բացատրեցինք թէ ինչպէս հողը համայնքից անցաւ որոշ գասակարգի ձեռքը, թէ ինչպէս այդ հողի օրինական տէրերից 95 առ հարիւրը զրկուելով իրենց հողից և քշուելով հէնց այդ հողի վրայից դարձաւ զրկողի և յափշտակողի սարուկը, վարձկան մշակը և արդիւնաբերողը և թէ ինչպէս այդ անարդար բռնագրաւումի սխառէմը ծագելով բանակայների, զինւորների՝ աղնական և Ֆէոդալ կոշուածների միջից, գոյութեան կէտ նպատակը դարձաւ արդի կապիտալիստին, խոշոր հողատիրոջը և թէ հողատիրութիւնն այսօր բաժանուած լինելով երեք անհաւատար կատէկօրիայի, այն է, մեծ, միջակ և վաճի հողատէրերի, միւս կողմը թողնելով հողագուրկների աճագին մի բանակ, ստիպում է բնկերվարութեան հրապարակ գալով վերջ տալ այդ անարդա-

րութեան, կանոնաւորելով հողերի բաժանումը, նրա անդիւ-  
նաբերութիւնը եւ սպառումը :

Եւ այսպիսի մի ձեռնարկը արդարութեան իրականացումն  
է, ուրիշ ոչինչ : Պայց թէ ինչպէս պիտի երեւան դայ այդ ի-  
րականացումը, և ինչպէս պիտի կատարուի բռնագրաւումը,  
յափշտակող դասակարգի ձեռքից, այդ է այն գլխաւոր և  
կարեւոր կէտը, որի վրայ շատ խակ ու տնաս մտքեր շփոթ-  
ւելով ձգնում են ամբաստանել ընկերվարութիւնը, որպէս թէ  
նա ծրագրել է արեւան ու բռնութեան ճանտպարհով հողերը  
առնել արդէ «օրինական» տէրերի ձեռքից և բաժանել զըր-  
կւածներին, ասել է զրկել մէկ դասակարգ յօգուտ մի այլ  
դասակարգի :

Այո, ընկերվարութեան նպատակն է հողը համայնակա-  
նացնել, ազգայնականացնել և մշակել նրան բոլոր աշխատող  
ձեռքերով անխտիր և նրա արդիւնքը որոշ ու արդար սխալ-  
մով բաժանել համայնքի մէջ միայն սպառելու եւ ապրելու  
և ոչ թէ վաճառքի եւ ջանի համար և այդ նպատակին հաս-  
նելու համար, նա չպիտի դիմէ ո՛չ սուրի, ո՛չ արիւնահեղու-  
թեան, ո՛չ զրկանքի և ո՛չ էլ որեւէ բռնի ու քայտերի մի-  
ջոցների, այլ էվօլուցիայի արգանդից ծնանելիք բէվօլուցիային՝  
այն է բնական օրէնքների անդիմադրելի յեղաշրջումներից ա-  
ռաջանալիք անխուսափելի յեղափոխութեան, որի սերմերը  
թշւառացած մարդկութեան դասն կեանքի սեւ հողի վրայ  
ցանուելով անխրաւ յափշտակողի ձեռքով, ծլում և աճում է  
բնաշրջման օրէնքների խնամքով և պիտի պտղաբերէ սիրոյ,  
կողակցութեան և հաւասարութեան աւետարանի՝ ընկերվա-  
րութեան ձեռքովը : Բայց մինչ այդ վերջնական յաղթու-  
թեան երեւումը, ընկերվարութիւնը բնաշրջման ընթացքի հետ  
զուգընթացաբար պիտի կատարէ իր նախնական միտան, իր  
պարտականութիւնները հանդէպ զրկւած և անխրաւուած դասի  
մասնաւորապէս, իսկ ընդհանուր մարդկութեան ընդհանրա-  
պէս :

Ինչպէս շատ ուրիշ յափշտակուած իրաւունքների և բռն-  
նագրաւում հանրային հարստութիւնների, նոյնպէս և հողե-  
րի վերադարձի համար, ընկերվարութիւնը բնորոշ է պայ-  
քարելու երկու զօրաւոր միջոցներ, Ա. քաղաքական և Բ.

Ինքուստորիական հատագործակցական պայքար զրկւածների  
կողմից : Եւ հէնց այդ միջոցներով նա արդէն գործնական հո-  
ղի վրայ է զրկել որ նպատակը, իր ծրագիր և դասնանքը,  
և այդ միջոցները նա պիտի գործածէ որպէս զէնք՝ արդէ ըն-  
կերվարական անարդար և անհաւասար կարգ ու սարքը խոր-  
տակելու և յեղաշրջումի, էվօլուցիայի կատարելիք դերը  
փութացնելու համար :

Պայքարի այդ ձեւովն է, որ ընկերվարութիւնը հաւա-  
տում է լուծել հողային հարցը և ոչ թէ արեւան ու բռնու-  
թեան ճանապարհով :

Բացատրենք թէ ինչպէս .

Մենք վերն ասացինք թէ՛ հողն այսօր գանուում է երեք  
տեսակ հողատէրերի ձեռքում : Ա. Մեծ հողատէր կամ կա-  
պիտալիստը, Բ. Միջակ հողատէր կամ իր հողերը վարձա-  
կախների ձեռքով մշակողները և Գ. Փոքր հողատէրերը, ու-  
րոնք իրենց հողը անձամբ մշակելով նրա արդիւնաբերութիւ-  
նից հողում են իրենց և իրենց ընտանիքների պէտքը միայն  
ատանց նրա գերարտադրութիւնից հարստանալու նպատակով :

Նախ՝ վեր ասենք Մեծ հողատէրը կապիտալիստը : Այս  
դասակարգին պատկանող հողատէրերը շնորհիւ իրենց արտու-  
յած անտեսական աճազին ուժին, խոշոր կապիտալին, տի-  
րում են հողերի 75 առ հարիւր տոկոսին, այն էլ երկու տե-  
սակ, անձատապէս և հաւաքաբար :

Խոշոր հողատէրը կամ կապիտալիստը անհատապէս տէրն  
է ներկայանում այն հողերին, որոնք նա կամ ստացել է ժա-  
ռանդաբար իր յափշտակող կամ բռնագրաւող պապերից և  
կամ իր անձնական կապիտալիստական բացառիկ ճարպիլու-  
թեամբ ու շահագործումի միջոցով կարողացել է ձեռք ձգել :  
Իսկ հաւաքաբար, կապիտալիստները միացած ընկերութեան  
անուամբ երկաթուղիներ տարածելու, հանքեր շահագործելու  
և անտառներ անկելու են, խոշոր ձեռնարկների անուամբ  
օրինական կարծւած արդէ անարդար օրէնքների թեկադրու-  
թեամբ արանում են հողերի աճազին տարածութեան վրայ  
և նրանց արդիւնքը զիջում՝ յանուն այդ հաւաքական մարմ-  
նի, կազմուած շահագործող ընկերութեան :

Երկու զէպքում ևս, Մեծ հողատիրոջ թէ՛ անհատական ևս թէ՛ հաւաքական տիրապետութիւնը, թէ՛ ևս արդի («սեփականութեան») անարդար օրէնքների հիման վրայ («օրինաւոր») սակայն էապէս անարդար ևս ապօրինի է ևս հետեւանք՝ յափրչտակութեան, բունագրաւորմի ևս շահագործումի վատթարագոյն սխառնմի: Հետեւաբար ընկերվարութիւնը ձգտում է աշխատել իր քաղաքական պայքարի յաղթութեամբ, ժողովուրդի, համայնքի, ազգի ևս ազգերի ձայնովը նրա քէտովը ևս բարձրագոյն կամքովը, ասել է ստանց արիւն թափելու ևս օրինական ձեւով Մեծ հողատէրից հետ առնել խոչոր հողամասերը ևս դենը հաւաքական, կողլէկտիւ աշխատութեան տակ, որի մէջ մաս ևս բաժնն պիտի ունենայ նոյն ինքը խոչոր հողատէր, կապիտալիստը, որովհետև ընկերվարութիւնը թող չի տալ առանց աշխատելու ապրել:

Հաս ընկերվարական ծրագիրին, հանրային կեանքի գէտքերը դերբացնող և մատակարարող միջոցները պիտի պատկանին հանրութեան և գործածւելն նրա ձեռքով պարզապէս ապրելու և ոչ շահագործելու համար, որով երբ ընկերվարականացած վարչական կազմերը օրինաւոր միջոցներով, այն է երկաթուղային, հանքային ևն. խոչոր ընկերութիւններին իրենց ձեռքում եղած երկաթուղիների, հանքերի և անտառների իսկական արժէքի վճարումով կը ժողովրդականացնեն և կը համայնականացնեն այդ երկաթուղիները, հանքերը և անտառները ևն. այդ զէպքում այդ սեփականութիւնների պատրւակով և նրանց ստուերի տակ ծածկւած հարիւրաւոր իրիտններ էչքը հողը ինքնաբերաբար կապիտալիստի, արդի սոչոր հողատիրոջ ձեռքից դուրս գալով սեփականութիւնը ըր դառնայ ժողովուրդի, ազգի և այս հողերի վրայ սկսելով լողէկտիւ հողագործութիւն և մշակութիւնը ի հաշիւ ընդհանրութեան, բնականաբար հրապարակի վրայից պիտի քաշին անգործների ահագին բանակները և այդպիսով խոչոր հողատիրոջ համար պիտի պակասի աժան (և նոյն իսկ ձրի աշխատող) վարձկան աշխատող ձեռքեր, խոպան և անարդիւն կողմերով խոչոր հողատիրոջ անհատական հողերը: Այս հողերը ևս կապիտալիստի համար պիտի դառնան մի ծանր և

անպէտք բևս, երբ մէկ կողմից զրկւած հաւաքական հողերի սեփականատիրութեան իրաւունքից և աշխատող վարձկաններից իր սեփական հողի վրայ, միեւնոյն ժամանակ ևս վրայ կը հասնի պրօլետսիւս տուրքերի ճնշիչ ծանրութիւնը: Ահա այս զէպքում Մեծ հողատէրը ինքը, եր յօժար կամքովը պիտի աշխատի ազատել իր ժառանգած կամ ձեռք ձգած ահագին հողերից, և այդ նոյրը որոշ կարգադրութեամբ նրա ձեռքից առնելով կը բարդուի համայնական հողի վրայ և այդպէսով հողերը հետզհետէ կը վերադառնան ազգի, ընդհանրութեան ձեռքը:

Կայ և մի որոշ պատճառ, որով Մեծ հողատէրը պիտի պարտաւորուի իր հողերը վերադարձնելու համայնքին, այգ՝ ընկերվարութեան ընդունած անտեսական պայքարի կօօպէրատիւ ձեւն է, որի հանդէպ մեծ հողատէրը, կապիտալիստը անդօր պիտի զգայ ինքզինքը իր բուրգի, բանպակի, ցորենի և կենսական այլ պէտքերի և արդիւնապետութիւնների շահագործումի մասին, որովհետև ընկերվարական համայնական արդիւնաբերութիւնը որ երևան պիտի գայ պարզապէս ՄԱՍԵՆԼՈՒ և ոչ շահի կամ վաճառքի համար, պիտի վերացնէ մրցումը և այդ ձեւով յաւելեալ արժէքը: Մի անգամ որ աներևութացաւ յաւելեալ արժէքը, այլ ևս այդ արդիւնաբերութիւն և նրա միջոցները ինչպէս նորը և մեքենաները և զանազան գործիքները կ'անպէտքանան շահատուկ կապիտալիստի համար և սեփականութիւն կը դառնան ընդհանրութեան և համայնքին:


Իսկ երկրորդ դասի, այն է Միջակ հողատէրերի մասին տրոնք հողերը ձեռք են բերել պարզապէս խեղճ ու անօգնական աշխատաւորների աշխատութեան յաւելեալ արժէքի բարդութեամբ, ընկերվարութիւնը և ոչ մի ձանձրոյթ չպիտի ունենայ, որովհետև այդ՝ ձգտումով կապիտալիստ, սակայն էապէս զէպ պրօլետարական բանակը քշուող տարրը՝ արդի անտեսական պայքարի ընթացքում կ'անուկելով խոչոր հողատիրոջ կողմից իր հողերը ևս կ'անյայտանան, իսկ հրապարակի վրայ մնացածները ևս պիտի զիջեն և խոնարհին ընկերվարական պայքարի առաջ և իրենց հողերի հետ միասին պիտի անցնին համայնական բանակի մէջ, քանի որ յաւելեալ արժէք ստեղծող ձեռքեր տրեւս պիտի պակասին և ինքը պիտի պարտաւորուի անձամբ աշխատել իր հողի վրայ և իր աշխատ-

տութիւնը վեր կառնի այնքան հող, որքան որ իր Ֆիզիքա-  
կան ուժերը պիտի ներեն, հետեւաբար մնացած անազն տա-  
րածութիւնը պիտի մնայ անպէտք և դայ ու բարդութի հա-  
մայնական հարստութեան, նրա սեփականութեան վրայ :

Գալով երրորդ դասի, այն է մանր հողատէրերի, որոնք  
սեփականացնում են հողը այն չափով որ իրենց և իրենց ըն-  
տանիքի աշխատութիւնովը կարոյանան մշակել և նրա ար-  
դիւնքը յատկացնել միայն իրենց անձնական պէտքերին, ա-  
ռանց իջնելու մրցումը սուպարէզը, այդպիսիների դէմ ընկեր-  
վարութիւնը որեւէ դիմադրական առարկութիւն չի կարող ու-  
նենալ, որովհետեւ այդպիսիք արդէն սնտեսական անհաւա-  
սար պայքարի չնորհիւ անցել են ընկերվարական բանակի մէջ և  
նրանց հողերն արդէն դատուած են հողաբաժանումի այդ ձեւի  
մէջ, որի իրականացմանն է ձգտում այսօր ընկերվարութիւնը :

Եւ այսպէս, մենք հաւատում ենք, որ այսպէս կարո-  
ղացանք լուսաբանել հողերի բնագրաւման հարցը, ապա-  
յուցանել թէ՛ այդ բնագրաւումը կատարուել է մեր պայպերի  
և նախահայրերի ձեռքով, հին օրերից սկսած, ապօրինի ձեւով  
և արեան ու արհաւիրքի ճանապարհով : Իսկ այսօր, զրկւած  
մաստան, հողագործիքների բանակը, իր ընկերային իրաւունք-  
ների և յարաբերութիւնների օրինական կաղապարումի և ձե-  
ւակերպումի արտայայտութեան ընկերվարութեան ձեռքով  
աշխատում է օրինաւոր պայքարով այդ բնագրաւումը հո-  
ղերը վերագարծնել համայնքին, ընդհանրութեանը և մարդ-  
կային ընկերութեանը, որի ամէն մէկ անդամը հաւաքական  
աշխատանքի մէջ դնելով իր բաժինը, պիտի առնէ և իր վա-  
յելումի արդար բաժինը :

Տնտեսական այս հիմնական յեղաշրջումը, հողերի վերա-  
դարձը համայնքին, մարդկային զանգւածի սպառաջ բարօ-  
րութեան հրամայական պահանջն է և ոչ արեւստական, որի  
իրագործումը պիտի կատարուի բնաշրջման օրէնքների համա-  
ձայն, եթէ նոյնիսկ ամբողջ աշխարհը կապիտալիստների և  
մեծ հողատէրերի հետ մրացած՝ անթիւ առասպելներով աշխա-  
տէ այլաբանել ընկերվարութեան ձգտումները և յաչս միա-  
միտների խեղաթիւրել նրա պաշտպանած թէզը, նրա բմբու-  
նումը հողային հարցի լուծման համար :



**ԳԻՆ 3 ԴՆԵԿԱՆ**  
(ԱՄԵՐԻԿԱ 15 ՍԷՆՔ)

« Ազգային գրադարան



NL0202412